



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

No

17- L

« 05 » օգոստոսի 2022

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 58-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ  
հոդվածի 1-ին մասերի պահանջով՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի  
դեկտեմբերի 16-ի «Նախադպրոցական ավագ խմբի կրթական համալիր ծրագիրը  
հաստատելու մասին» N 58-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝  
համաձայն Հավելվածի:

Վ Ա Հ Ր Ա Մ Դ ՈՒ Մ Ա Ն Յ Ա Ն

X 

Վ Ա Հ Ր Ա Մ Դ ՈՒ Մ Ա Ն Յ Ա Ն

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2022 թվականի  
օգոստոսի 5-ի N 17-Լ հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2021 թվականի  
դեկտեմբերի 16-ի N 58-Լ հրամանի

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՎԱԳ ԽՈՒՄԲ  
(5-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)**

Ծրագիրը հասցեագրված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, նախադպրոցական կրթական ոլորտի մասնագետներին՝ ուղղորդելու նրանց պլանավորելու և իրականացնելու 5-6 տարեկան սաների՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով նախատեսված կարողունակությունների ձևավորումը, նրանց հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը, նախադպրոցական ուսումնական հաստատությունից դպրոց սահուն անցման ապահովումը:

**ԵՐԵՎԱՆ- 2021**

կրթական չափորոշչի պահանջների հիման վրա (13.05.2021 թ N 744 - Ն որոշում)՝ այդ տարիքի սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի բովանդակության յուրացումը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների կողմից իրականացվում է նրանց համար մշակված ԱՌԲՉՊ-ով (անհատական ուսուցման և զարգացման պլան):

5-6 տարեկան սաների կրթական հիմնական ծրագիրը ներառում է Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված զարգացման հետևյալ հիմնական բնագավառները(ուղղությունները)՝

1) Խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

5 - 6 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի խոսքի զարգացման, լեզվամտածողության տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացման աշխատանքները, որոնք իրականացվում են սանի առօրյայի, պարապմունքների, խաղային գործունեության ընթացքում:

2) Հուզականային և սոցիալ-անձնային զարգացում.

5-6 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի զգայական դաստիարակությունը, հասակակիցների և մեծահասակների հետ շփումը, և հուզական զարգացմանը նպաստող գործունեության ձևերը:

3) Շարժողական և ֆիզիկական զարգացում.

5-6 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի շարժողական ակտիվությունը ապահովող գործունեության ձևերը. մանր և խոշոր մկանները զարգացնող խաղերը, զբոսանքները, կոփման արարողությունները:

4) Աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5-6 տարեկանների համար այս բնագավառը ներառում է շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, առարկայական միջավայրում կողմնորոշումը, ինքնուրույնության, ինքնասպասակման և անվտանգ կենսակերպի տարրական հմտությունների ձևավորումը գործունեության տարբեր ձևերում և առօրյայում:

5) Բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական, սեռային ինքնագիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ.

5-6 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սեռադերային սոցիալականացման, սեփական և ազգային ինքնությունը արժևորելու, գեղագիտական, բնապահպանական, աշխատանքային, բարոյական դաստիարակության տարրեր ապահովող գործունեության ձևերը:

Կրթական ծրագիրը նպատակուղղված է նախադպրոցական տարիքի ավարտին կարողունակ անձի ձևավորմանը և սահուն անցմանը դպրոցին:

Կարողունակ սանը կկարողանա հաղորդակցվել տարբեր իրավիճակներում և միջավայրերում՝ ըստ անհրաժեշտության կիրառելով նաև իր տարիքին համապատասխան մեղիա գործիքներ, ակտիվ մասնակցություն կունենա հասարակական կյանքին, ճանաչողական հետաքրքրություն կցուցաբերի շրջապատող աշխարհի հանդեպ՝ հաճույքով ներգրավվելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Սանը կդրսևորի ինքնուրույնություն, կունենա ինքնասպասարկման և ինքնակազմակերպման հմտություններ, կտիրապետի առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոններին, բարեվարքության և սոցիալական պարզագույն կանոններին:

Կարողունակ անձի ձևավորման կարևոր պայման է իմացական գործընթացների զարգացման անհրաժեշտ մակարդակը՝ վերլուծական, քննադատական մտածողության զարգացումը: Մաթեմատիկական տարրական պատկերացումների հենքային ձևավորումը պահանջում է սանից զինվել վերլուծելու, վերացարկելու, մոդելավորելու, դասակարգելու կարողություններով:

Սանը կկարողանա գնահատել գեղեցիկը, կճանաչի որոշ հայ և արտասահմանյան մանկագիրների և նրանց ստեղծագործությունները, ունակ կլինի երաժշտության, կերպարվեստի միջոցով արտահայտելու սեփական հույզերը: Հարգալից վերաբերմունք կցուցաբերի ազգային տոների ու ավանդույթների նկատմամբ, կդրսևորի սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ:

Սաների ֆիզիկական, մտավոր, զգայական, բարոյական, սեռային, աշխատանքային, տնտեսագիտական, էկոլոգիական, գեղարվեստագեղագիտական, դաստիարակության խնդիրները լուծվում են ծրագրային բաղադրիչներում և միտված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը:

Ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները բխում են հասակարակության զարգացման պահանջներից: Դրանք համակցված իրագործվում են ծրագրային առանձին բաղադրիչներում և իրականացնում են նախադպրոցական կրթության վերակառուցման ու նորացման գործընթացը՝ ոլորտային վերջնարդյունքների ապահովման և կարողունակությունների ձևավորման միջոցով:

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (5-6 տարեկանների) ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության կառուցվածքը, ուսումնական

տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղությունները ներառող շաբաթական պարապմունքների քանակը, կանոնակարգային պահերը, շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, տարեվերջին սաներից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ զարգացման բնագավառների ու գործունեության ձևերի:

Ծրագրային բովանդակությունը ապահովում է 5-6 տարեկան սաների կարողունակությունների ձևավորումը, սահուն անցումը դպրոցական ուսումնառության ինչպես նաև նախադպրոցական և տարրական կրթական ծրագրերի բովանդակության կապի պահպանումը՝ յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ:

5-6 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին.
- կրթության աշխարհիկ բնույթը,
- սաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, էկոկրթության հիմունքներին ծանոթացման ներառումը:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ**

Ծրագրում ներկայացված են դաստիարակության և ուսուցման նպատակները, ինդիկները՝ ըստ ծրագրային բաղադրիչների, սաների առօրյայի կազմակերպման առանձնահատկությունները, վերջնարդյունքների ապահովման հիմքերը՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

*Ծրագրի նպատակն է՝*

- 5-6 տարեկան սաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան՝ ֆիզիկական, մտավոր, հոգեկան և սոցիալ-անձնային զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտային վերջնարդյունքների:
- Նախադպրոցական կրթության ավարտին սաներից ակնկալվող կարողունակությունների ձևավորումը (գիտելիքներ, հմտություններ, համապատասխան վերաբերմունք և վարքագիծ):

➤ Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին աջակցումը:

Ավագ խմբի 5-6 տարեկանների կրթական հիմնական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, յուրաքանչյուր սանի համար՝ նրա զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ և կարիքների գնահատմամբ:

Նախադպրոցական տարիքի սաների կրթական ծրագրերի բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

- 1) շարժողական ոլորտ (Հապավումը՝ Շ).
- 2) խոսքի և հաղորդակցական ոլորտ (Հապավումը՝ ԽՀ).
- 3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (Հապավումը՝ ՀՍԱ).
- 4) իմացական ոլորտ (Հապավումը՝ Ի).
- 5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (Հապավումը՝ ԻԱԱ):

Ավագ խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 6 ծրագրային բաղադրիչներում՝

1. Խոսքի զարգացում
2. Ինձ շրջապատող աշխարհը
3. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ
4. Ֆիզկուլտուրա
5. Երաժշտություն
6. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչների ուղղությամբ միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում:

Ծրագրային բոլոր բաղադրիչներում արտացոլված վերջնարդյունքներն ուղղված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը նախադպրոցական տարիքի ավարտին՝

- 1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն.
- 2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն.
- 3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.
- 4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.
- 5) թվային և մեդիա կարողունակություն.
- 6) մշակութային կարողունակություն.

- 7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն.
- 8) տնտեսական կարողունակություն.
- 9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

## ՍԱՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### Շարժողական ոլորտ

- ա. սանը կարողանում է ճիշտ կատարել հիմնական շարժողական գործողությունները (քայլք, վազք, ցատկեր, նետումներ, մագլցում, սողանցում) տարբեր պայմաններում,
- բ. ինքնուրույն կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով, վերին և ստորին վերջույթների, ուսագոտու, իրանի և որովայնի համար,
- գ. խաղում է տարբեր ուղղվածության շարժախաղեր և մարզախաղեր, զուգորդում դրանց բնորոշ շարժողական գործողությունները՝ դրսևորելով անհրաժեշտ շարժողական ընդունակություններ,
- դ. տարբեր պայմաններում կատարում է սպորտային վարժություններ՝ սահում և սահնակով և դահուկներով, վարում է ինքնագնաց, երկանիվ հեծանիվ, դրսևորելով անհրաժեշտ շարժողական կարողություններ և հմտություններ,
- ե. խաղում է ջրային խաղեր, ազատ ոճով լողում է 5-10 մ,
- զ. կատարում է ճիշտ կեցվածքի ձևավորման և հարթաթաթուկունը կանխարգելիչ վարժություններ՝ առանց առարկաների և առարկաներով,
- է. կատարում է պարային շարժումներ՝ դրսևորելով ռիթմի զգացողություն և ռիթմալլաստիկ շարժողական կարողություն,
- ը. օրվա ռեժիմի ընթացքում կատարում է նմանողական շարժումներ և ընդհանուր զարգացնող վարժություններ,
- թ. ինքնուրույն կամ մեծի օգնությամբ կատարում է առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն, ֆիզկուլտ-դադար, տնային հանձնարարություններ,
- ժ. ինքնուրույն կատարում է առարկաներով ֆիզիկական վարժություններ (գնդակ, ցատկապարան, օղ, մարմնամարզական փայտ),
- ժա. կարողանում է վարել հեծանիվ, ինքնագնաց, սահել սահնակով և դահուկներով,
- ժբ. կիրառում է կոփման միջոցներ, պահպանում է օրվա ռեժիմը, դրսևորում է շարժողական ակտիվություն,
- ժգ. ֆիզիկական ակտիվության բոլոր ձևերում դրսևորում է կարգապահություն, աշխատասիրություն, ազնվություն, ընկերասիրություն, փոխօգնություն, կամք, պատասխանատվություն, նախաձեռնություն, վճռականություն,
- ժդ. գիտի օլիմպիական խաղերի ծագման և խորհրդանիշների մասին,
- ժե. պատկերացում ունի օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների և սպորտի դրական ներգործության մասին:



### ***Խոսք և հաղորդակցության ոլորտ***

- ա. սանը հորինում և կապակցված ներկայացնում է փոքրիկ պատմություններ, նկարագրում և բացատրում է որևէ երևույթ,
- բ. մտքերն արտահայտում է տրամաբանական հաջորդականությամբ՝ կիրառելով հոմանիշ, հականիշ բառեր,
- գ. ընկալում է ներկայացված պատմության կառուցվածքը՝ տարբերելով սկիզբը, ընթացքը և ավարտը:
- դ. տրված բառում տարբերում է առանձին հնչյուններ, դրանցով կազմում նոր բառեր, ընկալում է բառի վանկերը, վանկատում այն,
- ե. ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով, խմբավորում առարկաները, պատկերներն ըստ ընդհանուր հատկանիշների,
- զ. հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը և փոխկապակցվածությունը, ունի տարրական պատկերացումներ կենդանական աշխարհի և անկենդան բնության մասին,
- է. ճանաչում է հայերենի տառերը, արտաբերում ձայնավոր և բաղաձայն հնչյունները,
- ը. դրսևորում է հետաքրքրություն գրավոր խոսքի և ընթերցանության նկատմամբ,
- թ. նախաձեռնում է հաղորդակցում մեծերի ու հասակակիցների հետ, հաղորդակցման ընթացքում գնահատում է ոչ միայն իր, այլև դիմացինի խոսքը՝ շտկելով սխալ արտաբերած հնչյունը, բառը կամ նախադասությունը,
- ժ. հարցեր է տալիս մեղիայում լսած բովանդակության մասին, քննարկում է դրա նպատակը:

### ***Իմացական ոլորտ***

- ա. սանը վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում է իր պատկերացումներն ու վերաբերմունքը,
- բ. նկարագրում և մեկնաբանում է շրջապատող միջավայրում ընթացող երևույթները, սեփական որոշումներն ու գործողությունները,
- գ. առաջադրանքներ կատարելիս դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն և ստեղծագործականություն,
- դ. մոդելավորում է առարկաները, հեքիաթի հերոսներին, բնության երևույթները պայմանական նշաններով, առանձին պատկերներով, տարբերում է ճանապարհային երթևեկության պարզ նշանները,

ե. ունի պատկերացումներ տնտեսական պարզ հասկացությունների, ազգային և այլ ազգերի մշակութային առանձնահատկությունների, հայրենի երկրի մասին.

զ. դրսևորում է քննադատական վերաբերմունք ներկայացվող նյութի նկատմամբ, կողմնորոշվելով տեղեկատվության բազմազանության մեջ, կատարում է գրագետ ընտրություն, կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը,

է. դրսևորում է մեղիա և թվային գրագիտություն, նշում է իրական և մեղիա միջավայրերի տարբերությունները՝ մեղիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին,

ը. հասկանում է մեղիա գործիքների կիրառության բազմազանությունը, մեծահասակի աջակցությամբ հստակ նպատակով կարողանում է կիրառել դրանք կրթական և խաղային միջավայրում:

### ***Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ***

ա. սանն արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները բառերով և հաղորդակցման ոչ բառային ձևերով,

բ. տարբերակում և վերլուծում է իր ցանկություններն ու նախասիրությունները, կարողանում է ընտրել, հիմնավորել և բարձրաձայնել ընտրությունը,

գ. հասկանում և ընդունում է ընկերների հույզերն ու զգացմունքները, ցանկություններն ու նախասիրությունները,

դ. հարաբերություններում դրսևորում է սոցիալական զգացմունքներ, վերահսկում և կառավարում է իր հուզականությունը, կարողանում է հուզական մակարդակում կանխատեսել գործունեության արդյունքները,

ե. կառուցում է փոխվստահելի, գործընկերային հարաբերություններ մեծահասակների և հասակակիցների հետ, պահպանում է բարեվարքության կանոնները,

զ. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է ապրումակցման, համագործակցության և ինքնակառավարման հմտություններ,

է. ընկերների հետ հարաբերություններում դրսևորում է բարոյականային հատկություններ և ինքնազնահատման տարրական հմտություններ,

ը. ունի սուբյեկտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ, ինքնավերլուծության է ենթարկում սեփական վարքագիծն ու անձնային հատկությունները,

թ. ընդունում է մարդկանց միջև եղած տարբերությունները, ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների, հասարակական արդարության պարզագույն կանոնների և արժանապատիվ կեցության մասին, դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ:

### ***Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ***

- ա. սանը դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ, ինքնուրույն պահպանում է անձնական հիգիենայի կանոնները,
- բ. ընտրում է հագուստի, սանրվածքի իր տարբերակը,
- գ. ունի տարրական պատկերացումներ առողջ սննդակարգի, հանգստի վերաբերյալ,
- դ. դրսևորում է ֆիզիկական ակտիվության կարողություններ, ներկայացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգները, դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները,
- ե. ունի տարրական գիտելիքներ աղետների և դրանց հետևանքների մասին,
- զ. հետևում է երթևեկության հիմնական կանոններին,
- է. ունի տարրական գիտելիքներ վնասակար սովորությունների հետևանքների մասին,
- ը. բացատրում է շրջակա միջավայրին խնամքով վերաբերվելու անհրաժեշտությունը,
- թ. հիմնավորում է տանը, միջավայրում, փողոցում անվտանգության կանոններին հետևելու անհրաժեշտությունը,
- ժ. հասկանում է բժշկի մոտ այցի անհրաժեշտությունը, ունի պարզ պատկերացումներ համավարակների և դրանցից պաշտպանվելու մասին,
- ի. ունի տարրական պատկերացումներ թվային անվտանգության կանոնների մասին, գիտակցում է սեփական պատասխանատվությունը դրանց հետևելու գործում:

**ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

**ԱՎԱԳ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ (5-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**(9 Ժամյա, հնգօրյա աշխատանքային շաբաթով)**

Կանոնակարգը սաների առօրյայի կազմակերպման, համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայման է: Այն անհրաժեշտ միջոց է սաների ուսումնասիրատիարակչական աշխատանքների ու գործունեության ձևերի հերթագայման, ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ կազմակերպման, ուսումնական և խաղային ծանրաբեռնվածության համաչափ բաշխման համար: Օրվա օրինակելի կանոնակարգը կազմված է 5-6 տարեկան սաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ցանկայի է կանոնակարգային պահերի մեծ մասը կազմակերպել բակում:

<b>N</b>	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ	Ժամերը տարվա տաք եղանակին
----------	----------------------	--------------------	---------------------------

		Եղանակին	
1.	Սաների ընդունելություն, խաղեր, առավոտյան մարմնամարզություն	8.30 -9.30	8.30 -9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30- 9.55	9.30- 9.55
3.	Պարապմունքի նախապատրաստում	9.55- 10.10	9.55- 10.10
4.	Պարապմունք առաջին երկրորդ երրորդ	10.10 - 10.40 10.50 -11.20 11.30 – 12.00	10.10 -10.40
5.	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)	12.00 -12.45	10.40-12.45 (կոփիչ միջոցառումներ)
6.	Վերադարձ զբոսանքից, խաղ	12.45 - 12.55	12.45 - 12.55
7.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.55 - 13.20	12.55 - 13.20
8.	Ազատ գործունեություն	13.20-13.30	13.20-13.30
9.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13.30 -15.15	13.30 -15.15
10.	Աստիճանական արթնացում, ազատ խաղեր	15.15 -15.50	15.15 -15.50
11.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.50-16.10	15.50 -16.10
12.	Չբոսանք, խաղեր, տուն ճանապարհել	16.10 -17.30	16.10 -17.30

Յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատություն կազմում է իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան կանոնակարգ՝ հաշվի առնելով սանի՝ ուսումնական հաստատությունում մնալու տևողությունը, ապահովելով ուսումնադաստիարակչական աշխատանքների ու գործունեության տարբեր ձևերի ճիշտ հերթագայումը, խաղային գործունեության և ուսումնական գործընթացի հարաբերակցությունը:

**ԱՎԱԳ ԽՄԲԻ ՇԱՐԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿ**

N	Պարապմունքների տեսակները	Պարապմունքների քանակը
1.	Խոսքի զարգացում, գրաճանաչություն	2 պարապմունք

2.	Ինձ շրջապատող աշխարհը	2 պարապմունք
3.	Մաթեմատիկական տարրական պատկերացումներ	2 պարապմունք
4.	Նկարչություն	2 պարապմունք
5.	Ծեփակերտում	1 պարապմունք
6.	Կառուցողական աշխատանք/ ապլիկացիա /հերթագայությամբ/	1 պարապմունք
7.	Ֆիզկուլտուրա	2 պարապմունք
8.	Երաժշտություն	2 պարապմունք
9.	Շաբաթական ընդամենը`	14 պարապմունք

Նախադպրոցական ուսումնական հաստատության պարապմունքների տեղաբաշխման ցանկում կարևորվում է սաների մտավոր և ֆիզիկական բեռնվածության համամասնության սահմանումը, ընդ որում` մտավոր լարում պահանջող պարապմունքները պետք է ճիշտ հերթագայվեն շարժունակություն պարունակող պարապմունքներով:

Շաբաթական 14 պարապմունքը բաժանվում է շաբաթվա օրերի վրա և կազմակերպվում առավելագույնը` երեք պարապմունք:

Ավագ տարիքային խմբում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է օգոստոսի 20-ին: Պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերի 15-ից մինչև մայիսի 31-ը` 25-30 րոպե տևողությամբ: Սեպտեմբերի առաջին երկու շաբաթը հարմարման փուլ է, ուստի հատուկ պարապմունքներ չեն անցկացվում: Պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը 10 րոպե է:

Ծրագրային նյութի յուրացման համար հաշվետու ժամանակահատված է սահմանվում յուրաքանչյուր եռամսյակը:

Չորրորդ եռամսյակի համար նախատեսված չէ պարապմունքների բաշխման ցանկ, քանի որ պարապմունքներն անցկացվում են միայն ուսուցանված նյութի կրկնության ու ամրապնդման նպատակով:

Ամռան ամիսներին անցկացվում են կոփիչ միջոցառումներ:

Բաց թողնված ծրագրային ծավալը կարող է լրացվել չորրորդ եռամսյակում:

**Ավագ խմբում կազմակերպվող պարապմունքների քանակը` ըստ ամիսների և տարվա կտրվածքով**

	Ըստ ամիսների	Տարվա կտրվածքով

1. Խոսքի զարգացում, գրաճանաչություն	8	<b>72</b>
2. Ինձ շրջապատող աշխարհը	8	72
3. Մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորում	8	72
4. Նկարչություն	8	72
5. Ծեփակերտում	4	36
6. Այլիկացիա, կառուցողական աշխատանք	4	36
7. Ֆիզկուլտուրա	8	72
8. Երաժշտություն	8	72

## ԽՈՍՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականի խոսքի զարգացումը, մայրենի լեզվի տիրապետումը սերտ կապված է սանի գիտակցության զարգացման, շրջապատող միջավայրի ճանաչման, ազգային մշակույթի յուրացման, հաղորդակցական կարողությունների ձեռքբերման, անձնավորության ձևավորման հետ:

Ծրագրային այս բաղադրիչի իրականացումը մեծ հնարավորություն է տալիս լուծելու մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության մի շարք խնդիրներ: 5-6 տարեկան երեխաների խոսքը զարգանում է շրջակա միջավայրին, մանկական գեղարվեստական գրականությանը ծանոթանալու միջոցով, գործունեության տարբեր ձևերի ընթացքում:

Խոսքի զարգացման հիմնական նպատակներն են՝

- ✓ կատարելագործել սաների խոսքի հնչյունային կուլտուրան, հասնել բառերի ու հնչյունների մաքուր արտաբերմանը, ընդարձակել ակտիվ բառապաշարը:
- ✓ ծանոթացնել «պատմություն», «նախադասություն», «բառ», «վանկ», «հնչյուն» լեզվական միավորների հետ,
- ✓ սովորեցնել խոսքը կառուցել քերականորեն ճիշտ,
- ✓ զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը, երկխոսելու և մենախոսելու կարողությունը,
- ✓ դաստիարակել հուզական արձագանք և հետաքրքրություն գրական ստեղծագործությունների նկատմամբ:

Ավագ խմբում խոսքի զարգացման ծրագրային բաղադրիչի խնդիրներն են՝

ա) նպաստել խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակմանը,

բ) հարստացնել և ակտիվացնել բառապաշարը,

գ) նպաստել խոսքի քերականական կառուցվածքի ձևավորմանը,

դ) զարգացնել կապակցված խոսքը,

ե) ծանոթացնել մանկական գեղարվեստական գրականությանը

զ) տարրական տեղեկություններ հաղորդել լեզվական երևույթների մասին:

Նախատեսվում է արդյունավետ աշխատանք իրականացնել նաև հետևյալ ուղղություններով.

- բանավոր կապակցված խոսքի զարգացում, հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացում,
- հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցների, կառուցների, օրինաչափությունների, սկզբունքների ու կանոնների գիտակցում:

Գրաճանաչության ուսուցման ծրագրի բովանդակության հիմնական խնդիրներն են.

- ձևավորել բառը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողությունը,
- զարգացնել ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակելու կարողությունը,
- զարգացնել սաների մանր մկանային համակարգը՝ գրելու գործընթացի դյուրին կազմակերպելու համար:

Խոսքի զարգացումը կապված է ծրագրային մյուս բաղադրիչների հետ: Ծրագրային որոշակի խնդիրներ լուծվում են խոսքի զարգացման, կերպարվեստի, մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման, երաժշտության, ֆիզդաստիարակության ծրագրային բաղադրիչների ինտեգրման համատեքստում, որտեղ գերակա խնդիրը խոսքի զարգացումն է:

### ***Խոսքի հնչյունային կոլտուրայի դաստիարակում***

Յուրացնելով լեզվի հնչյունային կողմը՝ սանը հենվում է խոսքային լսողության վրա: Ավագ նախադպրոցական տարիքում խոսքի հնչյունային կոլտուրայի դաստիարակման խնդիրներն են՝

- Ամրապնդել մայրենի լեզվի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությունը, մշակել խոսքի արտահայտչականությունը:
- Սովորեցնել լսողությամբ ճիշտ արտաբերել հետևյալ խմբերի հնչյունները՝ ս-զ, ս-ց, շ-ժ, չ-ց, ս-շ, գ-ժ, մ-ն, կ-տ, դ-տ, լ-ր(ռ):
- Կառավարել ձայնի ուժը, խոսքի արագությունը, ճիշտ օգտվել արտահայտչականության հնչերանգային միջոցներից: Ձևավորել ձայնի ուժը և բարձրությունը փոխելու կարողությունը,
- Չարգացնել և կատարելագործել հնչյունային լսողությունը ըստ իրադրության:
- Կատարելագործել հնչյունային խոսքի բոլոր կողմերը: Ամրապնդել հնչյունների ճիշտ արտասանությունը: Սովորեցնել հնչյունները տարբերակել լսողությամբ և արտասանությամբ:
- Չարգացնել խոսքային շնչառությունը:
- Վերացնել հնչարտասանության թերությունները:
- Սովորեցնել բառերն արտասանել լեզվի ուղղախոսության կանոններով:
- Ամրապնդել և զարգացնել արտասանական և ձայնային ապարատները, սովորեցնել պարզ և ճիշտ արտասանել բառերն ու նախադասությունները:

### ***Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում***

Քերականությունը համարվում է լեզվի տրամաբանությունը, ուստի կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս խնդիրն ավագ նախադպրոցական տարիքում՝ մասնավորապես.



- նպաստել խոսքում օգտագործել պարզ և բարդ նախադասությունների կիրառումը,
- պատմելիս քերականորեն ճիշտ փոփոխել ակտիվ բառապաշարում եղած բառերը,
- սովորեցնել ծանոթ պարզ բառերը փոխակերպել բարդ բառերի,
- դաստիարակել ինչպես սեփական, այնպես էլ դիմացինի քերականական սխալները նկատելու և ուղղելու, մաքուր և հստակ խոսելու ձգտում,
- սովորեցնել օգտագործել բառերի փաղաքշական ձևեր՝ միևնույն առարկայի անվանման ժամանակ (շուն-շնիկ, ձուկ-ձկնիկ, տուն-տնակ ...),
- զարգացնել անծանոթ բառերի իմաստը գուշակելու կարողություն,
- զարգացնել երեխաների խոսքի ձևաբանական և շարահյուսական կողմերը, բառի հոգնակի ձևերը կազմելու, բառերը արտաքին և ներքին հոլովման ենթարկելու կարողությունը,
- խոսքը հարստացնել քերականական ձևերով ու կառույցներով:

***Բառապաշարի հարստացում և ակտիվացում***

Բառապաշարի հարստացումը ենթադրում է ոչ միայն բառերի քանակական ավելացում, այլև բառերի իմաստային կողմի յուրացում: Ավագ նախադպրոցական տարիքում բառապաշարի զարգացման խնդիրը մասնավորապես ներառում է.

- Հարստացնել և ակտիվացնել բառապաշարը՝ առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերով:
- Չարգացնել նշանակությամբ հակառակ իմաստ ունեցող (հականիշ) բառերը նտրելու կարողությունը, օրինակ՝ ուժեղ-թույլ, արագ-դանդաղ, կանգնել-վազել, կամ նույնանիշ բառեր՝ ուրախ-զվարթ, թռչել-ցատկել և այլն:
- Սովորեցնել անվանել նյութական իմաստ արտահայտող բառեր՝ փայտ, մետաղ, ապակի և այլն:
- Չարգացնել երեխաների ուշադրությունը ու հետաքրքրությունը բառի նկատմամբ:
- Սովորեցնել առարկաներն առանձնացնել և ճիշտ անվանել, դասակարգել ըստ հատկանիշների՝ նյութ, ձև, գույն, չափ:
- Սովորեցնել հասկանալ հանելուկների, հումորային շուտասելուկների, նկարելուկների, խնդուկների նշանակությունը:
- Բացատրել առակների, ասացվածքների փոխաբերական իմաստը,
- Սովորեցնել արտասանել, երգել, ոտանավորների բառերը փոխարինել այլ բառերով,
- բառապաշարը հարստացնել և ակտիվացնել սեղանային խաղերին ( շախմատ, շաշկի, լոտո, փազլ) վերաբերող բառերով:
- Չարգացնել ընդհանրացնող բառը ճիշտ հասկանալու և խոսքի մեջ այն կիրառելու կարողությունը:

- Ծանոթացնել միևնույն բառի տարբեր նշանակություններին:

### **Կապակցված խոսքի զարգացում**

Կապակցված խոսքի զարգացման խնդիրներն են՝

- Չարգացնել գեղարվեստական ստեղծագործությունը կապակցված, ճիշտ հաջորդականությամբ, ինքնուրույն և արտահայտիչ վերապատմելու կարողությունը, պատմելիս օգտագործել հատկանիշ ցույց տվող բառեր, գործողությունների նշանակություն արտահայտող բառեր :
- Չարգացնել կերպարների բնութագրելու կարողությունը:
- Ներկայացնել գործող անձանց երկխոսությունը:
- Ձևավորել նկարագրական, սյուժետային պատմվածք՝ ըստ նկարի ինքնուրույն կազմելու կարողությունը: Դեպքերի նկարագրության ժամանակ ցույց տալ գործողության տեղն ու ժամանակը:
- Սովորեցնել ավարտել անավարտ պատմությունը՝ ցուցաբերելով ստեղծագործականություն և ինքնուրույնություն:
- Չարգացնել ներկայացվող կյանքի նկատմամբ քննադատական վերաբերմունք դրսևորելու կարողությունը:
- Չարգացնել սեփական փորձից պատմություններ հորինելու կարողությունը:
- Սովորեցնել բնութագրել իր արտաքին տեսքը, դիմանկարի նկարագիրը (հայելանման զրույց) իր անվան իմաստը, նշանակությունը, իր բնութագրական հատկանիշները և առանձնահատկությունները:
- Չարգացնել երկխոսություն և մենախոսություն կառուցելու կարողությունը: Թեմատիկ զրույցների միջոցով հնարավորություն ընձեռել սաներին մտնել երկխոսության մեջ: Չարգացնել երկխոսության ընթացքում հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողություն, սովորեցնել օգտվել արտահայտչամիջոցներից՝ ժեստ, դիմախաղ, խոսքի արտահայտչականություն: Չարգացնել զրույցին մասնակցելու, միջամտելու, սկսելու, ավարտելու, լսելու և լսելի լինելու կարողությունները:
- Ձևավորել ընկերների խոսքը ըստ բովանդակության և կառուցվածքի գնահատելու կարողություն:
- Չարգացնել նկարի բովանդակությունը հասկանալու, բնանկարի մասին պատմվածք հորինելու, տարբեր նկարներ համեմատելու կարողությունը՝ օգտագործելով պատկերավոր բառեր և արտահայտություններ:

### **Ծանոթացում մանկական գեղարվեստական գրականությանը**

Գեղարվեստական գրականության հետ ծանոթացման խնդիրն առանցքային դեր ունի սանի խոսքի զարգացման գործընթացում: Այն ենթադրում է՝

- դաստիարակել սեր և հետաքրքրություն գրականության նկատմամբ, ձևավորել գրական, գեղարվեստական ճաշակ, հերոսների արարքները գնահատելու, գրական լեզվի մի քանի առանձնահատկություններ (Էպիտետներ, հեքիաթին բնորոշ կրկնություններ) նկատելու կարողություններ,
- զարգացնել բանաստեղծությունն արտահայտիչ արտասանել կարողություն՝ օգտվելով տրամաբանական դադարներից, շեշտերից,
- զարգացնել հայտնել ստեղծագործության բովանդակության վերաբերյալ սեփական վերաբերմունք արտահայտելու կարողությունը,
- զարգացնել գրական ստեղծագործությունները ըմբռնելու, դրանց բովանդակությանը հուզականորեն արձագանքելու, կարողություն,
- սաների մեջ ձևավորել բանաստեղծական լսողություն, գեղարվեստական գրականության մի քանի ժանրերի, լեզվի, կառուցվածքի, պատկերավորության պարզագույն տարրերի վերաբերյալ նախնական պատկերացումներ,
- հարստացնել սաների պատկերացումները գրողների, բանաստեղծների կյանքի, ժողովրդական ստեղծագործության, գրքերի և նկարների վերաբերյալ,
- սովորեցնել ինքնուրույն գտնել խոսքային միջոցներ, ստեղծագործական մտահղացումները իրականացնելիս պատկերավոր լեզվով արտահայտել մտքերը,
- սովորեցնել հորինել հանելուկներ, գտնել դրանց բառային արտահայտության համառոտ, պատկերավոր ձևեր,
- բանաստեղծություն կամ որևէ ստեղծագործություն ներկայացնելիս սովորեցնել չափավորել ձայնի ուժը և բարձրությունը, խոսքի տեմպը, օգտագործել դիմախաղ և շարժում:

Ներկայացվում է գեղարվեստական ստեղծագործությունների ցանկ, որը դաստիարակին հնարավորություն կտա իր հայեցողությամբ և սաների ցանկությամբ կատարել ստեղծագործությունների ընտրություն, դրանք կիրառել պարապմունքների և ազատ գործունեության ընթացքում:

**Պատմելու և ընթերցելու համար** - Ղազարոս Աղայան - «Մեղուն ու աղավնին», Յովհաննես Թումանյան - «Ծիտը» Խաչատուր Աբովյան - «Վատ ընկերը», Աթաբեկ Խնկոյան - «Անտերև ծառը», Պարույր Սևակ - «Հայոց լեռները», Նանսեն Սիքայեյան - «Աշնան նկար», Երվանդ Պետրոսյան - «Զամին ու փուչիկը», Յուրի Սահակյան - «Պայմանը», Լաուրա Պողոսյան - «Տառերի զրույցը», Գ.Մովսիսյան «Սուտն ու ճշմարտությունը» Յովհաննես Թումանյան-«Բարեկենդանը» «Սուտիկ Որսկանը», Պարույր Սևակ - «Շունն ու գայլը», Գրիգոր Եղիկյան - «Տոնածառի հանդեսում», Ավետիք Իսա-

հակյան - «Երջանիկ խրճիթը» «Բարեսիրտ շունը», Դերենիկ Դեմիրճյան - «Պույ-պույ մկնիկ», Վիկտոր Վարդանյան-«Տևակը», «Ծիտը», Ժնևա Կոնդակչյան - «Ծիտիկ» Սուրեն Մուրադյան - «Հացթուխը», Լիպարիտ Սարգսյան - «Աստղիկ տատ», Ղազարոս Աղայան - «Արև», Յովհաննես Թումանյան - «Ձախորդ Փանոսը», Պարույր Սևակ - «Արագիլը, Յովհաննես Շիրազ - «Փոքրիկ հովիվը», Ս. Օրբեյան - «Մայր ծիծեռնակը», Սիլվա Կապուտիկյան - «Ավոյի ծիլը» Ժ.Կոնդակչյան - «Խելոք տղան» Պատվական Խաչատրյան - «Ծառի խնդրանքը», Լ. Պողոսյան «Իմ մայրիկը ուրիշ է», «Մեծերի օրինակով»:

**Արտահայտիչ արտասանություն** - Ղազարոս Աղայան - «Այդ ե՞րբ է լինում», «Հնձվորները», Յովհաննես Թումանյան - «Տերևաթափ», «Աշուն», Պարույր Սևակ - «Ուղտն ու ծիտը», Յովհաննես Շիրազ - «Ի՞նչ դառնալ» Հայրապետ Հայրապետյան - «Աշուն», «Աշնան երգը», Սարմեն - «Քաջ գինվորը», Գրիգոր Եղիկյան - «Փուշը», Սիլվա Կապուտիկյան - «Շինարար Լևիկը», «Իմ հայրենիքը», Սուրեն Մուրադյան - «Ով ինչ է երագում», «Տատն ու թոռը», «Էրեբունի», Լիպարիտ Սարգսյան - «Ինչ կլինի», «Լորին», Երվանդ Պետրոսյան - «Երգ բառերի մասին», «Բարև, բարև, բարև», Էդուարդ Միլիտոնյան - «Լուսակիրը», «Տերևները», Գ. Սարյան «Ցողիկը», Պ. Խաչատրյան «Ձուրը», Ն. Միքայելյան «Կամ, կամ, կամ», Ղազարոս Աղայան - «Արի՛, դու արի՛», Յովհաննես Թումանյան - «Արևը», «Ծաղիկները», «Շունն ու կատուն», Սիլվա Կապուտիկյան - «Իմ սահնակը», «Երգ հայրենիքիս մասին», Սուրեն Մուրադյան - «Սահմանապահ մեծ եղբայրս», «Իմ մայրիկը», Երվանդ Պետրոսյան - «Լինե՞ր մի կատու, մի շուն», «Իմ երգ», «Գարուն», Յուրի Սահակյան - «Խուտուտ-մուտուտ», Լաուրա Պողոսյան - «Նոր տարի», «Աշուն», Գեղեցիկ Մովսիսյան - «Տատիկներիս», Վ. Վարդանյան «Աշխատում ենք», Է. Մկրտչյան «Աշխատանքը», «Լուսակիրը», Ա. Խնկոյան «Գարուն», Ռ. Ղարիբյան «Անտառի բնակիչները», «Գարունն ինչով է գալիս», Աթաբեկ Խնկոյան - «Գարուն», «Ծիծեռնակ», Գևորգ Դողոխյան - «Մանուշակ», Հայրապետ Հայրապետյան - «Ձնծաղիկ», «Մայիս», «Գարնան երգը», «Սարյակի տունը», Սարմեն - «Մանուկների աշխարհը», Վազգեն Տայան - «Մայրիկիս օգնեմ», Մկրտիչ Կոչյուն - «Վարդաբույր մայիս», «Լորիկ», Հակոբ Աղաբաբ - «Ձնծաղիկ», Գրիգոր Եղիկյան - «Ձատիկը», Գուրգեն Գաբրիելյան - «Ամպիկի երգը», Սուրեն Մուրադյան - «Իմ մայրիկը», Էդուարդ Միլիտոնյան - «Ձանգակածաղիկ», Էդուարդ Ավագյան - «Բողբոջը», «Անձրևը», Լիպարիտ Սարգսյան - «Մեր այգում» Լաուրա Պողոսյան - «Գետակ», «Փոքրիկ գինվոր եմ», «Այժն ուսուցիչ» «Հեքիաթների աշխարհում», «Խաղաղություն», «Երևան», Յուրի Սահակյան - «Անձրև»:

**Վերապատմում** - Յովհաննես Թումանյան - «Գառնիկ ախպերը», Վախթանգ Անանյան - «Միջօրեին», Սիլվա Կապուտիկյան - «Այս գիրքը լավ կպահեմ», Գեղեցիկ Մովսիսյան - «Ի՞նչ պատահեց, երբ Սիմաֆորը քնեց», Ա. Մանասյան «Չորս եղանակ քույրիկներ», Մ. Թարյան «Ծիտիկները փրկեցին», Ղազարոս Աղայան - «Գայլն ու գառը», Յովհաննես

Թումանյան - «Ոսկու կարասը», «Լեզուն կտրած ծիտիկը», Ստեփան Չորյան - «Շամոն», «Մի գիշեր անտառում», Աղասի Այվազյան - «Ճնճողուկը» Ն.Նաիրյան - «Անտառի աստղեր», Գեղեցիկ Մովսիսյան - «Տատիկի գնահատականը», «Ձվերը զատիկի համար», Միխայիլ Պրիշվին - «Անձրևը»:

**Ստեղծագործական պատմում** - Փառանձեմ Պողոսյան - «Կիսատ պատմություն», «Ոսկե աշուն», «Տոնական հրավառություն «Իմ սիրելի խաղալիքը», «Իմ ընտանիքը», «Ես դպրոց եմ գնալու», «Հայ գինվորը» «Իմ ընկերները», «Իմ ծննդյան օրը», «Մայրիկի տունը», «Իմ տունը Երևանն է», «Իմ հայրիկը», «Հայրենիքի պաշտպանը», «Իմ համակարգիչը», «Շախմատի արքան», թեմաներով պատմվածքների հորինում:

### **Օժանդակ գրականություն**

**Պատմելու և ընթերցելու համար** – Վ. Սարգսյան «Թութակը մանկապարտեզում», Պարույր Սևակ - «Վագրն ու կատուն», Հայրապետ Հայրապետյան - «Հպարտ աքլորը», Գուրգեն Բորյան - «Նկարը», Հենրիկ Սևան «Կացինը», Վլադիմիր Հովհաննիսյան - «Կրթված խոճկորը», Ռ.Կարայան - «Երկու անգամ երկու՝ չորս», Սիլվա Կապուտիկյան - «Բլուզի գանգատը», «Մեր փոշեկույ մեքենան», «Ժամացույցը» Վիկտոր Վարդանյան - «Վարպետ Գուրգենը» «Աղվեսն ու կճուճը», «Աքաղաղն ու բաղը», Սուրեն Մուրադյան - «Մեծ եմ, թե՛ փոքրիկ», Ռազմիկ Դավոյան - «Ոսկե ձուն», Յուրի Սահակյան «Հոպոպ» «Բուրձ մատն ասաց», Ա. Մովսիսյան - «Մեր բանակը» Հ. Թումանյան - «Հայկական բանակը», Կ. Չուկովսկի «Չոփչոփիկը»:

**Արտահայտիչ արտասանություն** - Մկրտիչ Կորյուն - «Արի՛, արի՛ զով անձրև», Գրիգոր Եղիկյան - «Փոքրիկ աստղագնացը», Հենրիկ Սևան - «Գայլն ու շները», Սիլվա Կապուտիկյան - «Կարծում եք թե կատա՞կ է», «Իմացիր, որ դժվար է», Վիկտոր Վարդանյան - «Երկու փիսիկ», Երվանդ Պետրոսյան - «Սարդն ու ճանճը», «Սիրամարգը», «Շունն ու հավը», Ս. Մուրադյան «Իմ մայրիկը», Գեղեցիկ Մովսիսյան - «Գարուն», Հովհաննես Թումանյան - «Տերն ու ծառան», «Չարի վերջը», Աթաբեկ Խնկոյան - «Մկների ժողովը», Հայրապետ Հայրապետյան - «Սասունցի Դավիթ» Ստեփան Չորյան - «Ճանապարհորդ Ջեկոն» «Գուրովի փիղը» Սիմակ - «Գիշերն անտառում» Կ.Ուշինսկի - «Աղվեսն ու գայլը», Լև Տոլստոյ - «Ճնճողուկներն ու ծիծեռնակները»:

**Վերապատմում** - Վախթանգ Անանյան - «Մեր հին տանձուտում», «Լորիկները», «Վայրի տանձենու տակ», Գեղեցիկ Մովսիսյան - «Սև խալիկը», Հանս Զրիստիան Անդերսեն - «Մատնաչափիկը», Ալեքսանդր Պուշկին - «Հեքիաթ ձկնորսի ու ձկան մասին», Սամուել Մարշակ - «Եղանակ քույրերը», Միխայիլ Պրիշվին - «Ոսկե մարգագետինը», Գերմանական ժողովրդական հեքիաթ - «Փիսիկն ու մկնիկը», Գրիմ Եղբայրներ - «Բրեմենյան երաժիշտները» «Քաղցր շիլան», Լեհական ժողովրդական հեքիաթ - «Արջուկը», Գ. Մովսիսյան «Կյանքի թելը», Ե. Պետրոսյան «Գարուն», Խ. Աբովյան «Վատ ընկերը»:

## **Գրաճանաչություն**

Ավագ նախադպրոցական տարիքում խոսքի զարգացման և դպրոցի նախապատրաստման կարևոր խնդիր է գրաճանաչության նախապատրաստումը, որը ենթադրում է ծանոթացում հնչյունին, վանկին, բառին, նախադասությանը, տեքստին:

Գրաճանաչության նախապատրաստական շրջանում հատուկ աշխատանք է տարվում պատմությունից նախադասությունը, նախադասությունից բառերն առանձնացնելու, բառը վանկերի, հնչյունների բաժանելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունը ճանաչելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է զարգացնել հատուկ վերաբերմունք բանավոր խոսքի նկատմամբ:

- Պատկերացում ձևավորել պատմության և նախադասության մասին:
- Գաղափար տալ ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին:
- Ծանոթացնել «բառ», «նախադասություն» եզրույթներին:
- Սովորեցնել ճիշտ օգտագործել «հնչյուն», «տառ», «բառ», «ձայնավոր հնչյուն», «բաղաձայն հնչյուն» եզրույթները:
- Սովորեցնել նախադասությունը տրոհել բառերի, բառերը բաժանել վանկերի:
- Գաղափար տալ հնչյունի մասին, սովորեցնել հնչերանգով առանձնացնել հնչյունը: Որոշել հնչյունների քանակը: Սովորեցնել կատարել երեք և չորս հնչյուն ունեցող, հնչյունային տարբեր կառուցվածքի բառերի հնչյունային վերլուծություն, այսինքն՝ սահմանել վերլուծվող բառերի, հնչյունների հաջորդականությունը, անվանել առանձնացված հնչյունները՝ բառի մեջ իրենց հնչեղության համապատասխան:
- Անվանել բառեր որոշակի հնչյուններով: Սովորեցնել բառի առաջին և վերջին հնչյունները որոշելու և բառի մեջ հնչյունը գտնելու կարողություն:
- Սովորեցնել վանկատել բառերը:
- Սովորեցնել ճիշտ դիրքով պահել գիրքը, տարբերել գրքի կամ տետրի շապիկը, թերթը, տողը:
- Ամրապնդել գիտելիքներն այն մասին, որ հնչյուններն ու վանկերը բառի մեջ, իսկ բառերը՝ նախադասության մեջ արտասանվում են որոշակի հաջորդականությամբ:

## Վերջնարդյունքներ (Հապավում՝ Խ2)

1. նախաձեռնի խոսակցություն հասակակիցների և մեծահասակների հետ,
2. ուղղի համապատասխան հարցեր՝ տեղեկություններ ստանալու նպատակով,
3. կանխատեսի գործողությունների ընթացքը և ավարտը,
4. նկատի և շտկի ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների խոսքը,
5. արտահայտի իր կարծիքը՝ դրսևորելով քննադատական վերաբերմունք,
6. հորինի փոքրիկ պատմություններ և դրանք ներկայացնի տրամաբանական հաջորդականությամբ,
7. ավարտին հասցնի անավարտ պատմությունը,
8. պատմի հեքիաթներ, ավանդույթներ,
9. կիրառի հականիշ և հոմանիշ բառեր
10. նկարագրի առարկաներ՝ օգտագործելով ածականներ,
11. համեմատի առարկաներն՝ օգտագործելով ածականի համեմատության աստիճանները,
12. պատմի նկարի բովանդակությունը,
13. արտասանի որոշ ստեղծագործություններ,
14. տարբերակի առարկաներն ըստ հատկանիշների,
15. նկարագրի առարկաների, երևույթների սմանություններն ու տարբերությունները,
16. ճանաչի հայերենի տպագիր տառերը,
17. տարբերի ձայնավոր, բաղաձայն հնչյունները,
18. տրված բառում որոշի առաջին հնչյունը,
19. կազմի տրված հնչյունով բառեր,
20. վանկատի բառը,
21. վանկերով կազմի բառեր,
22. բացատրի հնչյունի և տառի տարբերությունը,
23. ցուցաբերի հետաքրքրություն գրելու գործընթացի նկատմամբ,
24. նպատակային օգտվի մեղիա գործիքներից և հարցեր ուղղի դրանց վերաբերյալ,
25. պատասխանի հեռախոսազանգերին ըստ էության, և իրականցնի նպատակային զանգեր,
26. կատարի էլեկտրոնային խաղ-վարժություններ,
27. արտահայտի իր հույզերն ու զգացմունքները խոսքով և հաղորդակցման ոչ խոսքային ձևերով,
28. հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերություններում հետևի բարեվարքության կանոններին, օգտագործի բարեվարքություն արտահայտող բառեր,
29. խոսքով ներկայացնի շրջապատող միջավայրի և բնության երևույթների փոխկապակցվածությունը,
30. օգտագործի տնտեսագիտական բառապաշար,
31. բանակցի կոնֆլիկտների ժամանակ,
32. հետևի խմբի պարզ կանոններին:

### Բովանդակություն

Չեքիաթ, պատմվածք, հանելուկ, շուտաասելուկ, սուտասելուկ, ոտանավոր, առակ, ասացվածք.

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական , աշխատանքային

- ✚ Խաղեր.
- ✚ Պարապմունքներ - (գրույց, ոտանավորի ուսուցում և ամրապնդում, դիդակտիկ խաղ, պատմումների տեսակներ՝ ցուցումով, դաստիարակի օրինակով, նկարով, ստեղծագործական պատմումներ, վերապատմում, գեղարվեստական գրականության ունկնդրում).
- ✚ Մշակութային այցեր.
- ✚ Էքսկուրսիա, զբոսանք.
- ✚ Տոներ, միջոցառումներ.
- ✚ Բեմականացում, թատրոն, զվարճալիք.
- ✚ Ինքնուրույն գործունեություն.
- ✚ Աշխատանք կենտրոններում.
- ✚ Աշխատանք բնության անկյունում, պարտեզում, հերթապահություն:

Կապը նախադարոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝  
ԽՉ – (ե), (զ), (թ), (ժ), Ի - (ա), (բ), (գ), (դ), (ե), (ը), ՅՍԱ- (ա), (բ), (գ), (դ), (ե)  
Ի - (ա), (ե) (զ), (է), (ը), (թ)



## ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Ծրագրի «Ինձ շրջապատող աշխարհը» բաղադրիչի նպատակներն են՝

- ✓ զարգացնել սեփական անձի և շրջակա միջավայրի մասին պատկերացումներ,
- ✓ հաղորդել Էկոլոգիական նախագիտելիքներ, ձևավորել բնության և հասարակության միասնականության մասին նախնական պատկերացումներ,
- ✓ ձևավորել շրջակա միջավայրի հանդեպ հոգատար վերաբերմունք և համապատասխան վարքագիծ,
- ✓ նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների, հաղորդակցական հմտությունների զարգացմանը,
- ✓ ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վերաբերյալ տարրական պատկերացումներ:

Ծրագրային բաղադրիչի խնդիրներն են՝

- ընդլայնել իմացական հետաքրքրությունները շրջապատող աշխարհի մասին,
- խորացնել պատկերացումներն իր անձի, ընտանիքի, մանկապարտեզի, փողոցի, հայրենիքի, քաղաքի, գյուղի, երկրագնդի մասին,
- խորացնել պատկերացումներն ազգային տոների, ծեսերի մասին,
- ամրակայել սաների գիտելիքները խորհրդանիշների մասին,
- ձևավորել պատկերացումներ իր իրավունքների և պարտականությունների մասին,
- ձևավորել պատկերացումներ հիգիենիկ կանոններին հետևելու կարևորության մասին,
- ամրակայել հույզերի մասին պատկերացումները,
- խորացնել շրջապատող որոշ առարկաների ձեռք բերման, պատրաստման եղանակների (կահույք, սպասք, գրենական պիտույքներ, խաղալիքներ) վերաբերյալ սաների պատկերացումները,
- խորացնել ընտանի կենդանիների և նրանց ձագերի, նրանց սնվելու և վարքի առանձնահատկությունների, բնության անկյան բնակիչների, ակվարիումի բնակիչների, թռչունների մասին սաների պատկերացումները,
- ամրապնդել և ընդլայնել պատկերացումները վայրի կենդանիների մասին
- ընդլայնել պատկերացումներ միջատների *մասին* ,
- զարգացնել բանջարեղենը, մրգերը, հատապտուղները տարբերելու և անվանելու կարողությունը,

- ընդլայնել շրջապատում հանդիպող դեկորատիվ և պտղատու ծառերի, սենյակային բույսերի մասին գիտելիքները,
- նախնական գիտելիքներ հաղորդել բույսերի աճման և բազմացման համար անհրաժեշտ պայմանների մասին,
- ամրակայել տարվա եղանակների, բնության օրացույցի, եղևակների հերթագայությանը պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների մասին սաների պատկերացումները,
- խորացնել սաների պատկերացումներն անկենդան բնության (ջրի, հողի, անձրևի, ձյան, քամու) մասին,
- ձևավորել բնության երևույթների միջև պատճառահետևանքային կապերը հասկանալու կարողություն,
- շարունակել ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն,
- ձևավորել պատկերացում Կարմիր գրքի մասին,
- խորացնել սաների պատկերացումները մասնագիտությունների մասին,
- ամրակայել պատկերացումները երթևեկության պարզ նշանների, կանոնների, տրանսպորտի տեսակների մասին,
- շարունակել ձևավորել անվտանգ վարքագիծ,
- ձևավորել հրդեհի, երկրաշարժի ժամանակ գրագետ վարքագիծ դրսևորելու կարողություն,
- ձևավորել պատկերացումներ առողջ ապրելակերպի, որոշ սպորտաձևերի մասին:

### **Վերջնարդյունքներ (Ջապավում՝ ԻՇԱ)**

1. բնութագրի իրեն, նկարագրի իր նախասիրությունները,
2. իմանա իր և իր ընտանիքի անդամների մասին,
3. իմանա իր հասցեն, իր քաղաքը/գյուղը, հայրենիքը
4. ճանաչի դրոշը զինանշանը և օրհներգը,
5. ճանաչի հայրենիքի որոշ տեսարժան վայրեր,
6. իմանա ազգային որոշ ծեսերի և տոների մասին,
7. ճանաչի մի քանի հայ նշանավոր գործիչների,
8. պատկերացում ունենա սպորտի և Օլիպմիադայի մասին,
9. ճանաչի մի քանի այլ ազգերի տարազներ,
10. արտահայտի իր հույզերը և զգացմունքները խոսքային և ոչ խոսքային միջոցներով,
11. տարբերի առողջ և անառողջ սնունդը,
12. հետևի անձնական հիգիենային,
13. իմանա իրեն շրջապատող որոշ առարկաների ձեռք բերման, պատրաստման եղանակները (կահույք, սպասք, գրենական պիտույքներ, խաղալիքներ),

14. իմանա, որ դրամն անհրաժեշտ է գնումներ կատարելու համար, ճանաչի և անվանի շրջակա միջավայրի բուսական աշխարհի որոշ ներկայացուցիչների անունները,
15. ներկայացնի բույսերի աճման համար անհրաժեշտ պայմաններն ու դրանց կարևորությունը մարդու կյանքում,
16. ճանաչի և թվարկի ծաղիկները(սենյակային, պարտեզի, դաշտային)
17. ներկայացնի ծաղիկների բազմացման եղանակներն ու խնամքի ձևերը,
18. խնամքով վերաբերվի բույսերին,
19. ճանաչի ծառերի տեսակները,
20. ներկայացնի ծառերի կառուցվածքը, կարևորությունն ու օգտակարությունը,
21. բացատրի անտառի դերն ու նշանակությունը մարդու կյանքում ,
22. ճանաչի սևերի որոշ տեսակներ ,
23. ճանաչի ընտանի կենդանիներին, ներկայացնի նրանց մարմնի կառուցվածքը, ապրելակերպը և օգտակարությունը,
24. ճանաչի վայրի կենդանիներին, ներկայացնի նրանց մարմնի կառուցվածք, մազային ծածկույթն ու ապրելակերպը,
25. ճանաչի թռչունների մի քանի տեսակ, ներկայացնի մարմնի մասերը, ծածկույթը,
26. ճանաչի կենդանի օրգանիզմների կենսակերպի բազմազանությունը (ջրային, եկկենցաղ, օդային, ցամաքային) ,
27. համադրի, գտնի բուսական և կենդանական աշխարհի որոշ ներկայացուցիչների նմանություններն ու տարբերությունները,
28. բացատրի բնության եղանակային երևույթները և նրանցում կատարվող փոփոխությունները, բացատրի բնության եղանակներին բնորոշ փոփոխությունները,
29. նկարագրի անկենդան բնության տարրերը, ներկայացնի բնության առանձին երևույթները՝ կայծակ, ամպրոպ, դրսևորի անվտանգ վարքագիծ,
30. ներկայացնի բնության առանձին երևույթների վտանգները (անձրև, ձյուն, կայծակ, ամպրոպ, կարկուտ, մառախուղ), երևույթների միջև գտնի պատճառահետևանքային կապերը,
31. ընդգծի արևի դերն ու, նշանակությունը բույսերի, կենդանիների և մարդկանց համար,
32. ուսումնասիրի ջրի հատկությունները տարբեր վիճակներում, շրջանառությունը բնության մեջ,
33. մեկնաբանի նյութերի շրջանառությունը բնության մեջ՝ տերևների քայքայվելը և վերածվելը հողի,
34. պարզաբանի բնական պաշարների կարևորությունը, մարդու կողմից դրանց ճիշտ օգտագործման ձևերի անհրաժեշտությունը,
35. հասկանա աղտոտված միջավայրի ազդեցությունը մարդու, կենդանական ու բուսական աշխարհի վրա,
36. հասկանա մարդու առողջության և շրջակա միջավայրի փոխկապակցվածությունը,
37. ցուցաբերի ինսյոդական վերաբերմունք,
38. ճանաչի երկրագունդի մոդելը, որպես ողջ մարդկության միասնական տուն,
39. պարզաբանի արգելոցների դերն ու անհրաժեշտությունը,
40. իմանա Կարմիր գրքի մասին,

41. հասկանա մարդու՝ որպես բնության մի մասնիկի կապը կենդանական և բուսական աշխարհի հետ,
42. բացատրի բնության մեջ մարդու աշխատանքի կարևորությունը ,
43. արժևորի բնության գեղեցկությունը և դրսևորի այն պահպանելու ճիշտ վարքագիծ,
44. իմանա՝ ինչով են զբաղվում տարբեր մասնագիտությունների մարդիկ,
45. իմանա, տրանսպորտի տեսակներ, երթևեկության որոշ պարզ նշաններ, կիրառի կանոններ,
46. ցուցաբերի անվտանգ վարքագիծ,
47. բացատրի իր գործողությունները և դրանց պատճառները,
48. ընդունի մարդկանց միջև եղած տարբերությունները,
49. իմանա իր իրավունքներն ու պարտականությունները,
50. թվարկի և նկարագրի որոշ աղետներ
51. իմանա աղետների դեպքում ինչ վարքագիծ դրսևորի,
52. կայացնի որոշումներ և մեկնաբանի դրանք,
53. բանակցի հասակակիցների հետ,
54. հետևի վարքի կանոններին,
55. կիրառի կոնֆլիկտիների լուծման տարբեր միջոցներ,
56. մասնակցի խաղերին և խաղային իրավիճակներին,
57. ենթարկվի նախապես քննարկված կանոններին,
58. գնահատի իր արարքների հետևանքները,
59. գնահատի մարդկանց արարքները,
60. կատարի էլեկտրոնային խաղ - վարժություններ:

### **Բովանդակություն**

«Իմ ընտանիքը»,  
 «Ես և իմ ընկերները»  
 «Իմ մարմինը»,  
 «Անձնական հիգիենա»  
 «Անվտանգ միջավայր»,  
 «Իմ իրավունքներն ու պարտականությունները»  
 «Մասնագիտություններ»,  
 «Չգայարաններ», «Իմ հույզերը»  
 «Հայաստանն իմ տունն է»  
 «Տեսարժան վայրեր»  
 «Իմ քաղաքը, գյուղը, իմ փողոցը»  
 «Բարեկիրթ վարքագիծ»,  
 «Իմ մանկապարտեզը»  
 «Անվտանգ միջավայր», «Անվտանգ վարքագիծ»  
 «Ընտանի կենդանիներ»  
 «Վայրի կենդանիներ»  
 «Միջատներ» «Թռչուններ»  
 «Սնկեր» «Անտառ»  
 «Դեկորատիվ և պտղատու ծառեր» «Թփեր»  
 «Ճաղիկներ»

«Տարվա եղանակներ, եղանակային փոփոխություններ»  
«Բնության օրացույց» «Հող» «Ջուր, ջրի հատկությունները»  
«Արևը և դրա նշանակությունը»  
«Առողջ և անառողջ սնունդ»  
«Տոներ»

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- + Խաղեր.
- + Պարապմունքներ.
- + Մշակութային այցեր.
- + Նախագծային աշխատանք,
- + Փորձարարություն.
- + Էքսկուրսիա, զբոսանք,
- + Աշխատանք բնության անկյունում, բակում, բանջարանոցում.
- + Ինքնուրույն գործունեություն.
- + Տոներ, միջոցառումներ.
- + Բեմականացում, թատրոն:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի հետ՝  
Շ - (թ), ԽՀ - (ե), (զ), (ժ), Ի - (ա), (բ), (գ), (դ), (զ), (է), ՀՍԱ - (ա), (բ), (դ), (ե) (ը)  
ԻՍԱ - (ա), (զ), (ե) (ը)

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐ

«Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչը նպատակաուղղված է 5-6 տարեկան սաների մտավոր զարգացմանը, մաթեմատիկական տարրական գիտելիքերի ձեռքբերմանը, իմացական գործընթացների՝ հիշողության, ուշադրության, տրամաբանության ձևավորմանը, կենտրոնանալու կարողության զարգացմանը ինչպես նաև մեծահասակների և հասակակիցների հետ ճիշտ հարաբերությունների ձևավորմանը:

*Ծրագրային բաղադրիչը ներառում է հետևյալ բաժինները՝*

Նախաթվային՝

- մեծություն,
- ձև,
- տարածության մեջ կողմնորոշում,
- ժամանակի մեջ կողմնորոշում:

Թվային՝

- քանակ և հաշիվ,

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության ծրագրային խնդիրներ:

Մաթեմատիկական տարրական պատկերացումներ բաժնի խնդիրներն են՝

- ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ,
- ստեղծել անհրաժեշտ զարգացնող միջավայր և բարենպաստ պայմաններ,
- խթանել երեխաների ինքնուրույն գործունեությունը,
- ամրապնդել նախաթվային հասկացությունները,
- խորացնել առարկաները ըստ իրենց հատկությունների համեմատել կարողությունը՝ ըստ չափի, ձևի, գույնի,
- ընդլայնել երկրաչափական մարմինների և պատկերների վերաբերյալ նախագիտելիքները,
- սովորեցնել ճանաչել թվանշանները և տարբերակել թիվ ու թվանշան հասկացությունները,
- ձևավորել պատկերացումներ տարածության և ժամանակի մեջ կողմնորոշման վերաբերյալ,
- սովորեցնել կատարել 1-10-ի սահմանում ուղիղ և հետ հաշիվ,
- ծանոթացնել թվի միավոր կազմին,

- ձևավորել պատկերացում նախորդ, հաջորդ հասկացությունների վերաբերյալ,
- ծանոթացնել կարգային հաշվին,
- ծանոթացնել թվաբանական գործողությունների նշաններին (+,-,=) և համեմատության նշաններին (>,<, =),
- սովորեցնել կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ և լուծել պարզ խնդիրներ,
- սովորեցնել տարբերակել մաս և ամբողջ հասկացությունները, մասերից ստանալ ամբողջ և ամբողջը բաժանել մասերի:
- նպաստել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,
- ստեղծել մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման համար բարենպաստ պայմաններ,
- զարգացնել սաների ինքնուրույն գործունեությունը:

*Մեծություն*- Ամրապնդել մեծ-փոքր, հաստ-բարակ, երկար-կարճ, լայն-նեղ, բարձր-ցած հասկացությունները:

Պայմանական չափիչների օգնությամբ որոշել առարկայի մեծությունը, երկարությունը, լայնությունը, բարձրությունը, հաստությունը, ինչպես նաև հեղուկ և սորուն մարմինների չափը:

*Երկարություն* - համեմատել ըստ երկարության՝ երկար-կարճ, հավասար:

*Բարձրության* - համեմատել առարկաներն ըստ բարձրության՝ բարձր-ցածր, հավասար,

*Լայնություն* - համեմատել առարկաներն ըստ լայնության՝ լայն-նեղ, հավասար,

*Հաստություն* - համեմատել առարկաները ըստ հաստության՝ հաստ-բարակ, հավասար,

*Ձև*- ճանաչել, տարբերել և անվանել երկրաչափական մարմիններն ու պատկերները՝ գունդ, խորանարդ, գլան, կոն, բուրգ, շրջան, ձվածիր, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, բազմանկյուն:

*Կողմնորոշում տարածության մեջ* - Ամրապնդել և խորացնել տարածական պատկերացումները (ձախ, աջ, վերև, ներքև, առջև, հետև, հեռու, մոտ, մեջտեղ, վրա, տակ, ներս, դուրս):

*Կողմնորոշում ժամանակի մեջ* Ամրապնդել օրվա տարբեր ժամանակահատվածների՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, շաբաթվա օրերի, տարվա եղանակների և ամիսների անվանումների մասին պատկերացումները:

*Քանակ և հաշիվ*

- սովորեցնել կատարել քանակական ուղիղ և հետընթաց, տարբեր զգայարաններով համրանք 10-ի սահմանում.
- սովորեցնել կատարել նշված թվից համրանք ինչպես ուղիղ, այնպես էլ՝ հետ, միջակայքային (ինտերվալային) համրանք՝ կոնկրետ երկու թվերի սահմանում՝ 2-7, 5-9, 6-10, 10-7, 9-4 և այլն,
- սովորեցնել տիրապետել կարգային, դասական համրանքի կարողություններին /պատասխանել ո՞ր, ո՞րերորդ հարցերին/,
- որոշել առարկայի դիրքը շարքում
- զարգացնել նախորդ և հաջորդ թվերի հարաբերությունները հասկանալու կարողությունը, սովորեցնել գտնել յուրաքանչյուր թվի նախորդը և հաջորդը,
- հաշվելիս թիվը հարաբերակցել հաշված առարկաների անվան հետ ( 1,2,3,4 - ընդամենը՝ 4 արքադադ),
- հասկանալ թվի անկախությունը առարկաների ձևից, գույնից, տեսակից, չափսից, գրաված դիրքից, տարածությունից և հաշվելու ուղղություններից,
- ճանաչել 1-9 թվանշանները, թվաբանական գործողության նշանները ( -, + , = ), համեմատության նշաններ (<, >, =) և կատարել թվաբանական գործողություններ,
- թվի կազմության ձևերը /առանձին տարրերով՝ 5-ը կազմված է 1.1.1.1 և նորից մեկ և 1 և այլն/,
- ✓ բաժանել առարկան 2 և 4 հավասար և անհավասար մասերի և մասերից ստանալ ամբողջը:

### **Վերջնարդյունքներ (Հապավում՝ ՄՏՊ)**

1. նկարագրի առարկաներն ըստ հատկանիշների,
2. համեմատի առարկաները՝ ըստ հատկանիշների (3 հատկանիշ՝ չափ, ձև և գույն) տարբեր եղանակներով (առդրում, վերադրում, համադրում),
3. խմբավորի առարկաները՝ ըստ հատկանիշների (3 հատկանիշ՝ չափ, ձև և գույն)
4. ճանաչի և անվանի երկրաչափական մարմինները և պատկերները (խորանարդ, բուրգ, գունդ, գլան, կոն, շրջան, ձվածիր, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, բազմանկյուն),
5. ստանա նոր պատկերներ տարբեր երկաչափական պատկերներից,
6. ստեղծի նոր համադրություններ,
7. տարբերակի մաս և ամբողջ հասկացությունները, ամբողջը բաժանի 2 և 4 հավասար և անհավասար մասերի՝ ծալման և կտրման միջոցով և մասերից ստանա ամբողջ,
8. գտնի օրինաչափություններ



9. կատարի 1-10 ուղիղ և հետ համրանք,
10. կատարի համրանք որոշակի երկու թվի սահմանում
11. ճանաչի 0- 9 թվանշանները
12. նշի առարկաների քանակը,
13. ներկայացնի հաջորդ և նախորդ թվերը՝ 10-ի սահմանում
14. ներկայացնի կից թվերը՝ 10-ի սահմանում
15. իմանա 5- 10 թվերի միավոր կազմը
16. կատարի պարզ մաթեմատիկական գործողություններ
17. համեմատի միատեսակ առարկաների քանակը՝ անկախ առարկաների հատկություններից (ձևից, չափ, գույն, նյութ)
18. իրականացնի առարկաների, երևույթների մոդելավորում,
19. կիրառի մոդելներ և պայմանական նշաններ՝ գործնական աշխատանքներ կատարելիս,
20. կատարի մաթեմատիկական էլեկտրոնային խաղ-վարժություններ
21. ներկայացնի իրական և մեդիա միջավայրների միջև առկա նմանություններն ու տարբերությունները,
22. կողմնորոշվի ժամանակի մեջ՝ ըստ նշանակության կիրառով առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, երեկ, այսօր, վաղը, շաբաթ, ամիս, տարի, եղանակ և օրացույց բառերը,
23. տարբերի շաբաթվա օրերը, ամիսները և տարվա եղանակները և դրանց հաջորդականությունը,
24. տարբերակի տարածական ուղղությունները, կարողանա շարժվել նշված ուղղությամբ,
25. ճանաչի ճանապարհային երթևեկության պարզ նշանները և կիրառի երթևեկության որոշ կանոնները,
26. կատարի տրամաբանական առաջադրանքներ /լեզու, շախմատ, շաշկի, դոմինո/,
27. վերլուծի երևույթների միջև առկա պատճառահետևանքների կապերը,
28. գտնի խնդիրների լուծման տարբերակներ, գրանցի խնդիրների լուծման ելքեր:

### **Բովանդակություն**

1. Առարկաների համեմատություն
2. Չափումներ
3. Երկրաչափական պատկերներ և մարմիններ
  3. Մաս և ամբողջ
  4. Թվանշան (0-9)
  5. Ուղիղ և հետ հաշիվ

- 6. Կարգային հաշիվ
- 7. Թվի կազմություն
- 8. Հաջորդ և նախորդ թվեր
- 9. Թվաբանական գործողության և համեմատության նշաններ
- 10. Կողմնորոշում ժամանակի մեջ
- 11. Կողմնորոշում տարածության մեջ
- 13. Օրինաչափություն
- 14. Խնդիրներ

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային

- ✚ Խաղեր.
- ✚ Պարապմունքներ.
- ✚ Աշխատանք կենտրոններում.
- ✚ Էքսկուրսիա, զբոսանք.
- ✚ Մշակութային այցեր.
- ✚ Ինքնուրույն գործունեություն.
- ✚ Հերթապահություն.
- ✚ Տոներ, միջոցառումներ

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝  
ԽՀ- (ե), (ժ), Ի (ա), (բ), (գ), (դ), (ը), Հ-(հ), (է),

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձի տարիքային զարգացման ոչ մի շրջանում ֆիզիկական դաստիարակությունը այնպես ցայտուն չի ներգործում առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և սոցիալականացման վրա, ինչպես նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցականի ֆիզիկական կուլտուրան ոչ միայն մկանային վարժություն է, հիպոթետիկ հմտությունների և առողջության ամրապնդում, այլև զգացմունքի, ուշադրության, կամքի, գեղեցկության արտահայտության, որը հանրագումարային ցույց է տալիս սաների բազմաբնույթ կուլտուրան:

Անկասկած դրանք այն հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա հենվելով իրականացվում է սանի բազմակողմանի դաստիարակությունը՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, էկոլոգիական և այլն: Ֆիզիկական դաստիարակության բազմազան միջոցների արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել համակողմանի մոտեցում, կանոնավոր համագործակցել ծնողների հետ:

Նման հայեցակարգային դրույթները առաջադրում են նպատակաուղղված ամրապնդել սաների առողջությունը բարձրացնել ֆունկցիոնալ և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- առողջության ամրապնդումը ու պահպանումը, օրգանիզմի կոփումը և դիմադրողականության բարձրացումը, հենաշարժողական ապարատի ամրապնդումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը և հարթաթաթության կանխարգելումը, ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավումը
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայլք, ցատկ, սողանցում, մագլցում, նետում, քայլք՝ դահուկներով, հեծանիվ վարել, լող/ ձևավորում ինչպես նաև դրանց տեխնիկայի ճիշտ կատարում
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, մկանային ուժի, ճարպկության, հավասարակշռության, կոորդինացիայի/ մշակում
- շարժախաղերի և մարզախաղերի տարրերի ուսուցում, խաղային գործողությունների ձևավորում, զարգացում
- շնչառական և մանր մոտորիկայի զարգացման վարժությունների ուսուցում
- տեսական գիտելիքների հաղորդում ֆիզիկական վարժությունների օգտակարության, ֆիզկուլտուրայի պատմության, օլիմպիական խաղերի, առողջ ապրելակերպի վերաբերյալ

➤ անձի բարոյականային դրական գծերի՝ ինքնուրուկության, ակտիվության, ընկերասիրության, համագործակցության դաստիարակում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը պայմանավորված է սանի օրգանիզմի վրա տարբեր միջոցների միասնական ներգործությամբ, որոնց զուգակցումը կախված է նախադպրոցական ուսումնական հաստատության սաների առողջական վիճակից, ընտանեկան-կենցաղային պայմաններից, Էկոլոգիայի, սեռի, անհատական և տարիքային առանձնահատկություններից:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծման գործում Էական նշանակություն ունեն նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, սաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրարականացվում են ռեժիմի, սննդի, կուլտուր-հիգիենիկ ունակությունները ու հմտությունների, ինչպես նաև կոփման միջոցառումների փոխկապակցությամբ:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են հիմնականում շարժողական նպատակային ռեժիմի պայմաններում, որի հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող ֆիզկուլտուրային ամենօրյա միջոցառումները, սաների ազատ, ինքնուրույն շարժողական գործողությունը:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և վարժություններ տարբեր առարկաներով՝ հատկացնելով 30 րոպերից ոչ պակաս ժամանակ:

Ծրագրում տրված են նաև շարժողական ընդունակությունների մշակման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթոթայան կանխման և շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական ամբողջ աշխատանքի ընթացքում:

Համաձայն ծրագրի՝ օրվա ընթացքում շարժողական ռեժիմը ապահովվում է մարմնամարզական վարժությունների և երաժշտառիթմիկ պարապմունքների միջոցով, ըստ որի առաջադրվող նյութը բովանդակում է սպորտային վարժությունների պարզ ձևեր, նմանողական շարժումներ, ազգային պարային շարժումների տարրեր և այլն:

Շարժողական ընդունակությունների մշակման և շարժողական կարողությունների ու հմտությունների զարգացման համար վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով սաների անհատական և տարիքային հնարավորությունները, պարապմունքների և առօրյա աշխատանքների կազմակերպման համար ստեղծված պայմանները:

**Առավոտյան մարմնամարզություն** - Սկսած կրտսեր I խմբից՝ ծրագրով նախատեսվում է ամեն օր, մինչև նախաճաշ անցկացնել առավոտյան մարմնամարզություն:

Ծրագրով առաջարկվում է ամեն օր կատարել առավոտյան մարմնամարզություն, որի համալիրները պետք է կառուցվի ծանոթ, պարզ, մատչելի, դինամիկ, ուշադրությունը կենտրոնացնող, համազարգացնող, նմանողական խաղային վարժություններից և պարային շարժումներից:

Ցերեկային քնից հետո սաներին արթնացնելու, օրգանիզմը թարմացնելու, ակտիվ գործունեության նախապատրաստելու նպատակով առաջարկվում է ամեն օր անցկացնել մարմնամարզական վարժություններ՝ երեխաների ծանոթ խաղ վարժություններից, պարային շարժումներից, որոնք զուգակցվում են օդալողանքով (տևողությունը՝ 10-15 րոպե):

Շարժողական ռեժիմում սաների ինքնուրույն շարժողական գործունեությանը մեծ տեղ է հատկացված: Սանն ազատ ընտրում է իր նախասիրություններին համապատասխանող գործունեություն, որտեղ զարգանում է նրա ստեղծագործական ակտիվությունը: Սանն ինքնահաստատման հնարավորություն է ձեռք բերում: Դառնալով իրերի, գործողությունների, հարաբերությունների տեր, նա ինքնաճանաչողության որակ է ձեռք բերում, մշակվում են հասակակիցների հետ համագործակցելու ունակություններ: Սանի ինքնուրույն շարժողական գործունեությունը պայմանավորված է ակտիվությունը խթանող բազմազան պարագաների առկայությունը բակում և շենքի ներսում: Առաջարկվում է լայնորեն օգտագործել ծանոթ, ժողովրդական շարժախաղեր, մարզական տարրերով խաղեր ու սպորտային վարժություններ: Սաների ֆունկցիոնալ հնարավորություններն ընդլայնելու, շարժողական կարողությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել պարզագույն արշավներ, հեռավոր զբոսանքներ օգտվելով բնական արգելքներից:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքներն ամփոփելու նպատակով ծրագրով առաջարկվում է անցկացնել ժամանցներ, մարմնամարզական հանդեսներ, մարզական-մասսայական, առողջության օր, տասնօրյակներ:

Ծրագրային կյուրը բարդանում է տարիքային մի խմբից մյուսին անցնելիս: Ընդ որում, կարևորվում է նոր շարժումների տեխնիկայի յուրացումը և մանկական օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության աստիճանական բարձրացումը: Տարիքային յուրաքանչյուր խմբի համար տրված ուսուցման միայն նոր կյուրը: Յուրացված կարողությունների ամրապնդման ու կատարելագործման, մարզական ընդունակությունների և աշխատունակության բարձրացման համար նախատեսվում է սպորտային վարժությունների և խաղերի, խաղային

վարժությունների պարբերական կրկնություն՝ տարիքային բոլոր հաջորդող խմբերում, որակական նոր բարձրությամբ:

Ծրագիրը իրականացնելիս անհրաժեշտ է կարևորել հետևյալ հանգամանքները.

1. Նպատակաուղղված մշակել շարժողական ընդունակությունները, որոնք էականորեն կնպաստեն հիմնական շարժողական գործողությունների արագ և տեխնիկապես ճիշտ տիրապետմանը:

2. Հնարավորինս հաճախ ֆիզկուլտուրային պարապմունքները անցկացնել բակում:

3. Անհրաժեշտ է սովորեցնել սաներին գիտակցաբար հսկել սեփական շարժողական գործողությունների կատարման ընթացքը:

4. Համավարակի պայմաններում անհրաժեշտ է պահպանել շարժողական ռեժիմը, մշտապես հանձնարարել տնային առաջադրանքներ, որում պետք է ընդգրկված լինեն շնչառական և ընդհանուր դիմացկունությունը մշակող վարժություններ:

5. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների հաղորդմանը և դրանց կիրառմանը գործնականում:

Նախադարձականները ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին պետք է մասնակցեն (միջին և ավագ խումբ) սպորտային համազգեստով և մարզակոշիկներով, ձմռանը տաք մարզահագուստով և տաք կոշիկներով: Դահլիճում և մարզահրապարակում պետք է խստորեն պահպանել սանիտարահիգիենիկ պահանջները և անվտանգության կանոնները: Ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը ուսումնասիրելու, ինչպես նաև սաների ֆիզիկական պատրաստությունը ստուգվում է հետևյալ վարժություններով.

Վազք 10մ ընթացքից, վազք բարձր մեկնարկից 30մ, հեռացատկ տեղից, ավազապարկի կամ թենիսի գնդակի նետում աջ և ձախ ձեռքով, դիացկունության վազք 5 տարեկանների համար 90մ, 6 տարեկանների համար 120մ: Ընդորոմ ավագ խմբում գնահատվում են նաև հիմնական շարժողական գործողությունների կատարման որակի գնահատումը:

### **Խնդիրները:**

1. Առողջության պահպանում և ամրապնդում, օրգանիզմի դիմադրողականության բարձրացում, հենաշարժողական ապարատի ամրապնդում, ճիշտ կեցվածքի ձևավորում, ֆունկցիոնալ համակարգի բարելավում:
2. Հիմնական շարժողական գործողությունների տեխնիկապես ճիշտ կատարում (քայլք, վազք, ցատկ, նետում):
3. Շարժողական ընդունակությունների մշակում, հատկապես դիմացկունության և ճարպկության մշակում:

4. Շարժախաղերի, մարզախաղերի և սպորտային վաժառույթների տիրապետում:
5. Շնչառական և մանր մոտորիմայի զարգացման վարժությունների ուսուցում:
6. Տեսական գիտելիքների հաղորդում առողջ ապրելակերպից, օլիմպիական խաղերից, ֆիզիկական վարժությունը ինքնուրույն կատարման և մարդասիրական դրսևորումների մասին:
7. Սանի բարոյակամային հատկությունների՝ կարգապահության, ընկերասիրության, ինքնուրույնության, համագործակցության դաստիարակում:
8. Խթանել, երեխաների շարժողական ակտիվությունը, որ օրվա ընթացքում այն կազմի 13-ից 14 հազար քայլ:

**Գիտելիքներ ֆիզկուլտուրայի մասին**

Ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում տեսական գիտելիքների հաղորդմանը:

1. Հաղորդել գիտելիքներ ամառային և ձմեռային մարզումների, հայ և այլ ազգի անվանի մարզիկների, հայկական ազգային մարզաձևերի և շարժախաղերի, սպորտի դրական ներգործության, օլիմպիական խաղերի և հայ մարզիկների մասնակցության տարածված մարզումների գույքի, մարզահագուստի, մարզակառույցների մասին:
2. Ձևավորել գիտելիքներ տնային հանձնարարականների կատարմամբ, առողջ ապրելակերպի բաղադրիչների ու վարման նշանակության, առողջության պահպանման և ամրապնդման, առողջ ապրելակերպի կանոնների, ֆիզիկական ակտիվության նշանակության, ֆիզիկական վարժությունների հիմնական ձևերի և օրգան համակարգերի վրա դրանց ներգործության վերաբերյալ:
3. Հաղորդել գիտելիքներ կենցաղում և խաղերում, սեփական առողջության ամրապնդման, ֆիզիկական պատրաստվածության ձեռք բերման գործընթացում շարժողական ընդունակությունների մշակման կարևորության մասին, ինչպես նաև սեփական և հասակակիցների շարժողական ընդունակությունների դրսևորման մակարդակների մասին:

**Հիմնական շարժումներով վարժություններ**

**Շարում և շարափոխում** շարասյան տողանի, երկշարքի, շրջանի ինքնուրույն կազմում: Միասյուն շարքի շարափոխում երկսյուն, եռասյուն շարքերի: Դարձումներ տեղում՝ աջ, ձախ: Շարասյան մեջ հավասարվել տողանի գծով, ոտնաթաթերով: Բացազատվել ձեռքերն առաջ պարզած: Տողանում և շրջանում բացազատվել ձեռքերը կողմ պարզած:

**Քայլք.** տարբեր եղանակներով՝ կիսակքանիստ, կրնկից՝ թաթի վրա, կից քայլերով, փոխելով ձեռքերի դիրքությունը (վեր, առաջ, կողմ, ծափեր): Քայլել միասյուն, երկսյուն շարքերով: Քայլել 3-4մ փակ աչքերով:

**Վազք.** ոտնաթաթերի վրա՝ ծնկները վեր բարձրացնելով, փոքր ու լայն քայլերով, արգելքներ հաղթահարելով (շրջանցելով, ցատկով, սողանցումով): Վազել շարասյուններով՝ միասյուն և երկսյուն, շարափոխումով՝ ըստ ազդանշանի փոխելով տեմպը: Դանդաղ վազք՝ 1.5-2ր: Միջին արագությամբ վազք՝ 60-100մ (2-3 անգամ): Վազքի հերթագայում քայլով: Դանդաղ վազք տեղանքում՝ 320մ: Արագացված վազք՝ 10մ (3-4 անգամ): Արագացված վազք՝ 10մ (3-4 անգամ): Մաքրքավազք՝ 3 անգամ 10-ական մ:

**Ցատկեր.** տեղում՝ երկու ոտքով, ոտքերը խաչաձև, ոտքերը կողմ տարածելով, մեկ ոտքը առաջ, մյուսը՝ ետ, հաջորդաբար աջ և ձախ ոտքերի վրա՝ 30-40-ական ցատկ (2-3 անգամ): Ցատկով շարժվել առաջ՝ 3-4 մ: Չույզ ոտքի վրա ցատկով հաղթահարել 15-20սմ բարձրությամբ 5-6 առարկա: Առաջ շարժվելով ցատկել մեկ ոտքի վրա (աջ, ձախ): Հեռացատկ տեղից: Ցատկ 30սմ բարձրությունից՝ նշաձգված տեղում վայրէջքի պայմանով: Թափավազքով բարձրացատկ: Թափավազքով հեռացատկ: Վարժությունների ցատկապարանով, այն պտտելով առաջ և ետ:

**Նետումներ.** գնդակի վերնետում, հարվածում հատակին և որսում երկու ձեռքով, առնվազն 10 անգամ՝ իրար ետևից: Գնդակով հարվածել հատակին և բռնել ձեռքով (4-5 անգամ): Գնդակը փոխանցել մեկ ձեռքից մյուսը, նետել և որսալ ծափ տալով: Գնդակով հարվածել հատակին (առնվազն 10 անգամ)՝ տեղում և առաջ շարժվելով (5-6մ): Գնդակը փոխանցել միմյանց (ցածից, գլխի վրայից, կրծքից, ցատկով) և որսալ (կանգնած, նստած): Գլորել լցված գնդակները (1 կգ): 3-4 մ հեռավորությունից գնդակը նետել հորիզոնական և ուղղահայաց նշանակետին (2 մ բարձրությամբ տեղակայված թիրախ): Նետել հեռուն՝ 5-9 ոչ պակաս:

**Սողանցում և մագլցում.** գլխով հրելով գնդակը՝ չորեքթաթ սողանցել 3-4 մ: Սողանցել ետ՝ նախաբազուկների և ծնկների վրա հենվելով: Սահել մարզանստարանի վրայով՝ ծնկներին հենվելով: Շարժվել առաջ մարզանստարանին նստած դիրքով՝ ձեռքերի և ոտքերի օգնությամբ: Սահել մարզանստարանի վրայով. փորին պառկած դիրքով: Մագլցել սանդուղքով վեր: Պարանից բռնած կախվել, կանգնած, բարձրանալ թաթերին: Պարանը բռնել գլխից վեր և փորձել ոտքերը կտրելով հատակից՝ մնալ օդում կախված:

**Հավասարակշռություն.** անցնել սահմանափակ տարածությունը կից քայլերով՝ մեկ ոտքի կրունկը դնել մյուսի թաթի մոտ: Նույնը՝ ավազով պարկը գլխին: Նույնը՝ թեք տեղադրված մարզանստարանի վրայով՝ ուղիղ և կողքի: Վազքով բարձրանալ թեք տեղադրված մարզանստարանին և քայլել թաթերի վրա: Քայլել մարզանստարանի վրայով, շրջանցելով գնդակները, կքանստել նստարանի կենտրոնում, դնել ու հավաքել ավազե պարկեր, գլորել գնդակները: Մարզանստարանին կանգնած բարձրանալ ոտնաթաթերին և իջնել ներբանին, դարձումներ: Կանգնել մեկ ոտքի վրա (մյուսը տանել ետ, ձեռքերը կողմ-վեր) «Ծիծեռնակ» վարժությունը: Վազքից ցատկից հետո կքանստել



թաթերին, ձեռքերը տարածել կողմ, կանգնել մեկ ոտքի վրա, ձեռքերը գոտկատեղին: Քայլել շրջված մարզանստարանի ձողի վրայով: Պտտվել զույգերով միմյանց ձեռք բռնած:

**Պարային վարժություններ.** ըստ երաժշտության փոխել շարժումը: Հաջորդաբար ոտքերը դնել կրնկին, ապա դոփել ոտքերով: Երաժշտական պարզ, ռիթմիկ պատկերն արտահայտել ծափերով, ձեռքերը սահուն բարձրացնելով վեր և իջնելով առաջ և կողմ:

### **Ընդհանուր զարգացնող վարժություններ**

**Ձեռքերի և ուսագոտու համար.** Ելման դրություններ՝ ձեռքերը կրծքի առջև, ձեռքերը ուսերին (արմուկները ցած և կողմ): Ձեռքերը կրծքի առաջ ելման դրությունից ձեռքերը տանել կողմ, առաջ, արմուկները ծալել: Ձեռքերը ուսերին ելման դրությունից ձեռքերը բարձրացնել վեր, տանել կողմ՝ ափերը վեր: Ձեռքերը գլխին ելման դրությունից ձեռքերը տանել կողմ, բարձրացնել վեր: Ձեռքերը բարձրացնել առաջ ու վեր, մատները իրար միացած, պտտել դաստակները: Ձեռքերը բարձրացնել վեր-ետ՝ մեկընդմեջ և միաժամանակ: Բարձրացնել և իջացնել դաստակները, սեղմել և բացել մատները:

**Ոտքերի համար.** քայլել տեղում, ոտքերի թաթերը գետնից չկտրելով: Կքանստել մի քանի անգամ իրար ետևից, ամեն անգամ ավելի ու ավելի խորը՝ ձեռքերը բարձրացնելով վեր մեջքի ետևում, ծնկներին:

Ոտնարմատներով բռնել փոքր առարկաներ, բարձրացնել և իջեցնել, տեղափոխել տեղից տեղ: Կից քայլերով շարժվել կողմ, կրունկների վրա: Ոտքի թաթերով հենվել փայտիկներին, ճոպանին:

**Իրանի համար.** կանգնել պատի մոտ, հպվել պատին ծոծրակով, ուսերով, մեջքով, նստատեղով և կրունկներով, ձեռքերը բարձրացնել վեր և իջեցնել: Մեջքով հենվել մարզապատին, ձեռքերով բռնել ձողը (ազդրի բարձրության) և բարձրացնել ծնկային հողում ուղղված ոտքը: դեմքով կանգնել մարզապատի առջև, ձեռքերով բռնել ձողը (ազդրի բարձրության) և թեքվել առաջ: Իրանի պտույտներ՝ ձեռքերի տարբեր շարժումներով: Թեքվել առաջ՝ ձգտել դաստակի ափերը հասցնել հատակին: Հիմնական կանգ դրությունում մեջքի ետևում հյուսված մատներով դաստակները բարձրացնել հնարավորինս վեր: Թեքվել առաջ և ձախ ձեռքերը վեր բարձրացված դիրքով: Կքանստած դրությունում ընդունել մեկ ոտքին նստած, մյուսը տարածած կողմ դրությունը: Ծնկներին կանգնած դրությունից ընդունել հատակին նստած աջ և ձախ կողմերով: Մեջքին պառկած դրությամբ շարժել ոտքերը (խաչաձևելով, ձգելով դեպի կուրծքը): Փորի վրա պառկած դրությունում հենվել ձեռքերի վրա, բարձրացնել գլուխը և ուսերը: Ձգվել ձեռքերով՝ մարզանստարանի վրա:

### **Շարժախաղեր**

**Վագրով.** «Բռնոցի», «Անկյունիկներ», «Չույգերով վագր», «Մկան թակարդ», «Մենք ուրաժ տղաներ ենք», «Սագեր-կարապներ», «Կատարի պատկեր», «Ծածանները և գայլաձուկը», «Խորամանկ աղվեսը», «Առ ու փախիր», «Դատարկ տեղ», «Հնարամիտները», «Անտուն նապաստակ», «Գել-գել»:

**Ցատկերով.** «Հատակին չմնաս», «Ով ավելի լավ կցատկի», «կարթը», «Թմբից-թումբ», «Ով ավելի փոքր ցատկ կանի», «Կլասս», «Հոպ-հոպ», «Կաղ արագիլ», «Էծ-Էծ», «Էծակռիվ»:

**Մագլցումով, սողանցումով.** «Ով ավելի շուտ կհասնի դրոշակին», «Արջը և մեղուները», «Հրշեջները սովորում են», «Ծիտը կարին», «Աղվեսի բույն»:

**Նետումներով.** «Որսորդները և նապաստակները», «Նետի դրոշակի մոտ», «Նետի օղակի մեջ», «Խփիր գնդակին», «Խփիր կեզիին», «Գնդակը վարողին», «Գնդակի դարոց», «Սերսո», «Չարենք դառնանք», «Յոթ քար», «Գայլն ու ոչխարը»:

**Էստաֆետներ.** «Էստաֆետ զույգերով», «Գնդակը վարւր առանց կեզիներին դիպչելու», «Գնդակը նետի օղակի մեջ»:

**Արգելների հաղթահարում.** արագ վագր-սողանցում-քայլք մարզանստարանի վրայով-ցատկ արգելքի վրայով-վագր:

### **Մարզախաղերի տարրեր**

**Բասկետբոլ.** գնդակը նետել միմյանց կրծքի մոտից՝ երկու ձեռքով: Վարել գնդակը աջ և ձախ ձեռքերով: Գնդակը նետել օղակի մեջ երկու ձեռքով՝ կրծքի մոտից: Յուրացնել թիմային խաղի կանոնները:

**Բադմինտոն.** Գնդակը նետել ձեռնաթիակով (ռակետով)՝ այն ուղղելով որոշակի ուղղությամբ: Խաղալ դաստիարակի հետ:

**Ֆուտբոլ.** գնդակը վարել աջ և ձախ ոտքով՝ որոշակի ուղղությամբ: Գնդակը անցկացնել առարկաների միջով (շրջանցել): Գնդակը զլորել փոսիկների մեջ դարպասը: Գնդակը մի քանի անգամ իրար ետևից խփելով գնդակը փոխանցել միմյանց զույգերով:

**Մականախաղ.** տափօղակը զլորել մականով հանձնարարված ուղղությամբ միմյանց (զույգերով):

**Դահուկներ.** Դահուկներով քայլել փոփոխական սահընթացքով՝ հերթականությամբ սահելով աջ և ձախ ոտքով: Քայլել տեղանքում: Բարձրանալ բլրակ՝ աստիճանաձև, իջնել կքանստած: Խաղեր՝ «Ով առաջինը կկատարի դարձում», «Բարձրացրու», «Հասիր», դահուկներով անցնել 1-1,5 կմ հանգիստ տեմպով:

**Աչքերի վարժություններ.**

1. Թարթել աչքերը
2. Ամուր փակել և հետո բացել
3. Նայել աջ հետո ձախ

4. Նայել վերևի աջ անկյունը հետո ներքևի ձախ անկյունը
5. Նայել վերև հետո ներքև :

Ուսումնական տարվա սկզբում և վերջում պետք է գնահատել սաների հիմնական շարժողական գործողությունների կատարման քանակական և որակական կողմերը:

**ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՍԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (քայլը 10մ)**

Գնահատում	Գլխի և մարմնի դիրքը	Ձեռքերի և ոտքերի շարժումների համաձայնեցվածությունը	Ոտնաթաթի դիրքը	Քայլի ուղղության պահպանումը	Արդյունք վրկ
Բարձր	Իրանը և գլուխը պահում է ուղիղ:	Ձեռքերն առանց ավելորդ լարվածության ցած կախված են, շարժումները համաձայնեցված են ոտքերի շարժումների հետ:	Ոտնաթաթը դնում է կրունկից թաթ:	Պահպանվում է քայլի ճիշտ ուղղությունը:	
Ցածր	Իրանը ճոճում է դեպի աջ և ձախ, իջեցվում է գլուխը և ուսերը: Մարմինը թեքված է առաջ	Ձեռքերի շարժումները լրիվ չեն համաձայնեցվում ոտքերի շարժումների հետ: Ձեռքերը տարածում է:	Ոտնաթաթերն առաջ-նային մասով թեքված են ներս (ծուռթաթ): Ոտքերը ծնկային և կոնքազդրային հոդերում խիստ ծավված են: Ոտնաթաթը դնում է ուղիղ, այլ ոչ թե կրունկից թաթ:	Չի պահպանվում քայլի ճիշտ ուղղությունը:	
Միջին	Իրանի շարժումները չեն համապատասխանում դրական գնահատականին: Մեկ տարրի բացասական դրսևորում	Ձեռքերի շարժումների ոչ հստակ, արտահայտված կատարում: Մեկ կամ մի քանի տարրերի բացասական դրսևորում` մյուս տարրերի ճիշտ կատարման դեպքում:	Մեկ կամ մի քանի տարրերի սխալ կատարում` մյուս տարրերի ճիշտ կատարման դեպքում:	Մասամբ է պահպանվում շարժման ուղղությունը:	

**ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՍԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ (վազը 30 մ)**

Գնահատում	Շարժումների կորորդինացիա	Ռիթմայնություն	«Ճախրում»	Արդյունք վրկ
Բարձր	Իրանը և գլուխը պահել ուղիղ, ձեռքերն ուղիղ անկյան տակ ծավալած, ձեռքերի հստակ շարժումներ առաջ ու հետ:	Ուղղագիծ կամ հավասարաչափ վազք՝ ոտքերն առանց դոփելու:	Ակնհայտ տարբերվող «թռիչք», ոտքերի բավարար ծալում ծնկային հողերում:	
Ցածր	Իրանի ճոճում դեպի աջ և ձախ, գլուխը ցած պահած, ձեռքերը տարածած, ձեռքերի հետ ու առաջ շարժումների ոչ հստակ կատարում, ոտքերը ծնկային հողերում կիսածավալած են:	Ոտքերի դոփում. քայլի անհամաչափություն, ոչ ուղղագիծ վազք:	«Ճախրում»-ի բացակայություն՝ երկհենում. անընդհատ այս կամ այն ոտքը հպում է գետնին:	
Միջին	Միջանկյալ բոլոր վիճակներում կամ ձեռքերի, ոտքերի, իրանի շարժումները չեն համապատասխանում դրական գնահատականին. բացասական մեկ տարրի առկայություն մյուս տարրերի դրական գնահատականի դեպքում:	Բացասական մեկ կամ մի քանի տարրերի առկայություն՝ մյուս տարրերի դրական կատարման դեպքում, օրինակ՝ ուղղագիծ, բայց մանր ու վազք:	Ոչ հստակ «ճախրում», ոտքերի անբավարար ծալում ծնկային հողերում:	

**ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՍԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ (տեղից հեռացաուկ)**

Գնահատում	Չրում	«Ճախրում»	Վայրէջք	Արդյունք սմ
Բարձր	Ձեռքերի ռիթմիկ նախապատրաստական շարժումների առկայություն, ոտքերի ծալում և մեկնարկի դինամիկ դիրք, հրում երկու ոտքով միաժամանակ:	Չրման պահին ձեռքերի թափահարում առաջ-վերև, արտահայտված «ճախրում»:	Փափուկ և ճկուն վայրէջք՝ ոտնաթաթերից կրունկների վրա, կիսածալված ոտքերով:	
Ցածր	Ձեռքերի նախապատրաստական շարժումների բացակայություն, ոտքերի ոչ արտահայտված ծալում, երկու ոտքերով ոչ միաժամանակյա հրում:	Չրման պահին ձեռքերի թափահարման բացակայություն, ճախրում փոխարեն՝ քայլ:	Վայրէջք ուղիղ ոտքերով, վայրէջքի ժամանակ հավասարակշռության բացակայություն. որևէ ուղղությամբ վայր ընկնել:	
Միջին	Չրման ոչ բավարար արտահայտված առանձին տարրեր կամ բացասական (կատարված տարրերի առկայություն՝ մյուս տարրերի դրական կատարման դեպքում:	Ձեռքերի փոքր թափահարում, անբավարար «ճախրում»:	Վայրէջքի միջանկյալ վիճակներ՝ ոչ բավարար դրական:	

**ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՍԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**(150-200 գրամ ավազապարկի նետում)**

Գնահատում	Ելման դրույթուն	Թափահարում	Նետում	Իրանի դարձում	Արդյունք
Բարձր	Աջ ձեռքով նետելիս ուղղակեցվածք ձախ կողմով, աջ ոտքը կիսածավված:	Ձեռքի զատում դեպի նետման հակառակ կողմ՝ համարյա ուղղված վիճակով:	Շարժումն իրականացվում է համարյա ուղղված ձեռքով, հետևից առաջ ուղղությամբ՝ «գլխի հետևից»:	Իրանի շարժում՝ նետումն իրականացնող ձեռքի հետևից. շարժումն ավարտվում է դեպի մյուս կողմ դարձում կատարելով՝ նետման ուղղությամբ:	
Ցածր	Ուղղակեցվածքի բացակայություն նետման ուղղությամբ:	Դեպի կողմ ձեռքի զատման բացակայություն:	Նետումը բացակայում է:	Նետումից հետո բացակայում է իրանի դարձումը:	
Միջին	Ուղղակեցվածքի բացակայությանը բնորոշ միջանկյալ դիրքեր:	«Աշխատող» ձեռքի ճիշտ թափահարմանը համապատասխանող բոլոր դիրքերը:	Դրական գնահատականի համար պահանջվող նետող ձեռքի շարժումներից տարբերվող բոլոր մյուս շարժումները:	Իրանի դարձման անբավարար կատարում՝ առանց արտահայտված եզրափակող փուլի:	

**Պետք է կարողանա՝**

Շարժողական գործողություն	Տղաներ		Աղջիկներ	
	Տարվա սկիզբ	Տարվա վերջ	Տարվա սկիզբ	Տարվա վերջ
Վազք 10 մ ընթացքից	2.7 վրկ.	2.1 վրկ	2.8 վրկ	2.2 վրկ
30 մ վազք բարձր մեկնարկից	8.6 վրկ	7.9 վրկ	8.9 վրկ	8.1 վրկ
Տեղից հեռացատկ	86.3 սմ	100.4 սմ	77.6 սմ	100.1 սմ
Ավազապարկի նետում (150 գրամ) աջ ձեռքով	3.9 մ	6.9 մ	3.5 մ	6.4 մ
Ավազապարկի նետում (150 գրամ) ձախ ձեռքով	3.0 մ	5.1 մ	2.9 մ	4.7 մ
120 մ վազք	37.9 վրկ.	31.2 վրկ.	37.9 վրկ.	31.2 վրկ.



## Կոփում

Այս տարիքային շրջանում պահպանվում է կոփման այն արարողակարգերը, որը կատարվում է նախորդ տարիքային խմբերում:

Օդային լոգանքները պետք է անցկացնել ամբողջ տարվա ընթացքում: Օդային լոգանքը զուգակցվում է հիգիենիկ մարմնամաքության հետ 10-15 րոպե է: Կոփման միջոցներից է արևային լոգանքների ընդունելը: Այդ արարողության օգտակարությունն ավելի բարձր է առավոտյան ժամը 9-11-ը ընկած ժամանակահատվածում: Արևային արարողությունները պետք է սկսել 5-6 րոպեից, ապա այն անհարժեշտ է մեծացնել աստիճանաբար և հասցնել մինչև 10-15 րոպեի:

Ջրային արարողությունները կոփման լավագույն միջոցներից են:

Դրանց մեջ են մտնում՝ ջրաշփումները, ջրցանումը, ջրշփումը, մինչև գոտկատեղը լվացվելը, լողը:

Ընդհանուր ջրցանում կամ ցնցուղ. նախ պետք է ջերմաստիճանը լինի 34 աստիճան, ապա այն աստիճանաբար իջեցնել և հասցնել մինչև 24 աստիճանի: Ջրցողումը նույնպես պետք է կատարել 34 աստիճանի ջրով: Նախապես պետք է կազմակերպել երեխաների ջրաշփումը, ապա՝ ջրցանումը, և վերջում անցնել լողի:

Ջրային լոգանքները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 աստիճանից ցածր չէ:

Նշված խնդիրները լուծվում են ամենօրյա և ամառային կոփիչ միջոցառումների միջոցով:

Խորհուրդ է տրվում կոփման ժամանակ առաջնորդվել ներքինիշյալ ցուցումից

Կոփման օրը	Ջրի սկզբնական ջերմաստիճանը
1-3	37-34 °C
4-7	33-32 °C
8-11	31-30 °C
12-15	29-28 °C
16-20	27-26 °C
21-25	25-24 °C
26-30	23-22 °C

Օրինակ, կոփման առաջին 3 օրերում ջրի ջերմաստիճանը պետք է 37°C–ից նվազեցնել 34 °C:

## ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Գույքի անվանումը	Քանակ
1. Փետրագնդակ (անհրաժեշտ պարագաններով)	2 հավաքածու
2. Խորանարդիկներ (20. 20 սմ)	2 հատ

3. Կեզի	6 հատ
4. Օղականետիչ	3 հատ
5. Ավազով լցված պարկեր (քաշը 400 գրամ)	2 հատ
6. Ռետինե գնդակներ (տրամագիծը՝ 20 -25 սմ)	5 հատ
7. Ռետինե գնդակներ (տրամագիծը՝ 10 —12 սմ)	10 հատ
8. Ռետինե գնդակներ (տրամագիծը՝ 6 — 8 սմ)	10 հատ
9. Մարմամարզական փայտիկներ (երկարությունը՝ 75 – 80 սմ)	3 հատ
10. Սահնակներ	10 հատ
11. Օղախաղ (սերսո)	3 հատ
12. Ցատկապարան (երկ. 120 –150 սմ)	10 հատ
13. Ցատկապարան (երկ. 300 սմ)	1 հատ
14. Հոկեյի մական	30 հատ
15. Կարճ հյուսված քուղ (երկ. 75 սմ)	30 հատ
16. Քուղ (երկ. 15 — 20 մետր)	1 հատ
17. Դրոշակներ	30 հատ

**5-6 տարեկանների համար**

**Վերջնարդյունքներ (Հապավում՝ Ֆ)**

1. գործունեության տարբեր ձևերում ազատ կիրառի հիմնական շարժումները՝ քայլք, վազք, ցատկ, ցողանցում, մագլցում, նետում,
2. կատարի ընդհանուր զարգացնող վարժություններ,
3. խաղա շարժախաղեր և մարզախաղեր,
4. օգտվի մարզական գույքից,
5. ակտիվ շարժողական գործունեության ընթացքում դրսևորի շարժողական ընդունակություններ և հմտություններ,
6. վարի սահնակ, հեծանիվ, ինքնագնաց՝ դրսևորելով շարժողական հմտություններ,
7. օգնությամբ կամ ինքնուրույն լողա,
8. խաղա ջրային խաղեր,
9. նպատակային կատարի կեցվածքի զարգացմանն ու ձևավորմանն ուղղված վարժություններ,
10. կատարի ռիթմիկ պարային շարժումներ,
11. հետևի ռեժիմային պահերին,
12. օգտվի մարզական գույքից և պարագաներից,
13. դրսևորի կարգապահություն և բարոյական որակներ ֆիզիկական ակտիվության տարբեր ձևերում՝ շարժախաղեր, սպորտային խաղեր, ֆիզիկական վարժություններ, այլ,
14. հասկանա և բացատրի ֆիզիկական ակտիվության դրական ազդեցությունն օրգանիզմի վրա,
15. թվարկի ամառային, ձմեռային մարզաձևեր, հայ և արտասահմանյան անվանի մարզիկներին,
16. իմանա օլիմպիական մարզախաղերի ծագման պատմությունը և խորհրդանիշները,
17. պատկերացում ունի օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների և սպորտի դրական ներգործության մասին,
18. ինքնուրույն կատարի առավոտյան մարմնամարզություն, տնային հանձնարարություն, կեցվածքի ձևավորման հարթաթաթության կանխարգելման վարժություններ,
19. ցուցադրի արագաշարժության, դիմացկունության, ճարպկության, հավասակշռության, մկանային ուժի մշակման վարժություններ,
20. դրսևորի առողջ ապրելակերպի պահպանման վարքագիծ,
21. կարևորի ընկերասիրությունը, արդարասիրությունը, կարգապահությունը, ընկերների հետ համագործակցությունը:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝  
 Շ- (ա), (բ), (գ), (դ), (ե), (ը), (թ), ԽՅ - (գ), (թ), Ի - (ա), (գ), ՅՍԱ - (ա), (բ), (գ), (դ), (ե),  
 ԻԱԱ - (ա), (գ), (դ), (գ)

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի սաների գեղարվեստագեղագիտական դաստիարակության գործում: Այն սաների հոգու հայելին է, նրանց հույզերի, զգացմունքների արձագանքը: Իսկ զգացմունքը երաժշտության հիմնական բովանդակությունն է, սաների հուզական ոլորտը ձևավորելու արդյունավետ միջոցներից մեկը:

Երաժշտական ստեղծագործությունների զգացմունքային ընկալման շնորհիվ սանը բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, տարբերում է չարն ու բարին, տեսնում գեղեցիկը: Երաժշտությունը արտացոլվում է սանի զարգացման բոլոր ոլորտներում և կարևոր նշանակություն ունի նրա մտավոր, անձնային և գեղագիտական զարգացման գործում: Երաժշտության հմայքը, հուզականությունը, ելևէջները այնպիսին են, որ հնարավորություն են ընձեռում համադրելու ծրագրում տեղ գտած բոլոր պարապմունքների հետ:

Երաժշտական դաստիարակության հիմնական նպատակն է շարունակել զարգացնել երաժշտության առանձնահատկությունների և տեսակների մասին ունեցած նախագիտելիքները և նպաստել դրանց կիրառմանը նախադպրոցական ուսումնական հաստատության առօրյայում:

### **Խնդիրները`**

#### **Ունկնդրում**

- հենվելով սաների ընդունակությունների և արդեն ձեռք բերած փորձի վրա, երաժշտության միջոցով շարունակել ձևավորել նրանց երաժշտական ունակությունները,
- հարստացնել նրանց տպավորությունները նոր ստեղծագործություններ ունկնդրելիս,
- ծանոթացնել հայ ազգային, դասական, համաշխարհային մի քանի կոմպոզիտորներին,
- ձևավորել հայ ազգային, դասական, համաշխարհային որոշ ստեղծագործությունները ճանաչելու, գնահատելու, վերլուծելու կարողություն,
- ձևավորել ժողովրդական, դասական, ազգային, ժամանակակից որոշ ստեղծագործությունների բնույթը տարբերակելու կարողություն,
- ազգային տոների, ավանդույթների միջոցով զարգացնել սաների սեփական հույզերը, զգացմունքները, տպավորությունները արտահայտելու կարողություն,

- ձևավորել երաժշտական արտահայտչամիջոցները տարբերակելու ունակություն,
- գրավիչ և մատչելի եղանակով սաներին ծանոթացնել երաժշտական ժանրերին:

### **Ձայնավարժություն, երգեցողություն**

- ամրակայել երգը ժամանակին սկսելու և ավարտելու կարողությունը,
- զարգացնել առանց լարվածության, երգչային առողջամտությամբ, խոսքերի հստակ արտասանությամբ, թեթև ձայնով երգելու կարողությունը,
- սովորեցնել երգել երաժշտական գործիքի ուղեկցությամբ և առանց գործիքի,
- ձևավորել երգերը զգացմունքային կատարելու ունակություն,
- զարգացնել երգերի տեսակները տարբերակելու կարողություն,
- ձևավորել պատկերացում երգչախմբի մասին,
- զարգացնել կատարողական հմտությունները:

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- ձևավորել երաժշտության բնույթին համապատասխան ռիթմիկ շարժվելու կարողություն,
- զարգացնել երաժշտառիթմիկ գործունեության հմտությունները,
- զարգացնել սաների կողմնորոշումը ժամանակի և տարածության մեջ,
- սովորեցնել ընկալել երաժշտության տեմպի, ռիթմի, դինամիկայի, ուժգնության, ռեգիստրի փոփոխությունը և շարժվել համակարգված, հստակ՝ զգացմունքային արձագանքելով երաժշտությանը:

### **Պար**

- զարգացնել հայկական, ազգային, դասական, համաշխարհային որոշ պարեր ճանաչելու, տարբերակելու և պարելու կարողությունը,
- խթանել պարային շարժումների յուրացումը,
- սովորեցնել տարբերել պարային երաժշտության սկիզբը, ընթացքը, ավարտը՝ օգտագործելով պարի բովանդակությանը համապատասխան պարագաներ՝ ժապավեն, փուչիկ, գնդակ, օղակ, նվագարաններ և այլն,
- ձևավորել պատկերացում պարախմբի մասին,
- սովորեցնել տարբերակել բնույթով հակադիր պարային երաժշտությունը՝ կատարելով համապատասխան շարժումներ:

### **Խաղ**

- ձևավորել երաժշտական խաղերին արձագանքելու կարողություն,
- զարգացնել հեքիաթի հերոսներին, կենդանիներին նմանակելու կարողություն,
- հարստացնել երեխաների երաժշտական նախագիտելիքները խաղերի միջոցով:

### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

- աստիճանաբար և հետևողականորեն զարգացնել ռիթմի, տեմբրի, ռեգիստրի, ուժգնության, հնչյունի բարձրության տարբերակման հմտությունները,
- ծանոթացնել մանկական նվագարաններին, դրանց տեսակներին, սովորեցնել դրանց անվանումները՝ տարբերակելով հնչերանգները,
- ձևավորել տարբեր նվագարաններով նվագելու հմտություններ,
- ձևավորել պատկերացում նվագախմբի մասին,
- ցանկություն առաջացնել նվագելու փոքրիկ անսամբլներում և նվագախմբերում,

### **Յորինում (իմպրովիզացիա)**

- զարգացնել ստեղծագործական երևակայությունը,
- ձևավորել պարերում, խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու ունակություն:

### **Մատների մարզանք**

- երաժշտության ներքո ամրացնել սաների ափերի և մատների մկանները՝ նպաստելով նվագելու, նկարելու, պարելու և այլ կարողությունների զարգացմանը:

### **Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)**

- երաժշտության ներքո, պարագաներով կամ առանց պարագաների, ռիթմիկ շարժումների միջոցով զարգացնել սաների ռիթմն ու լսողությունը, ուշադրության կենտրոնացումը, հիշողությունը, ճարպկությունը:

### **Երաժշտական թերապիա**

- նպաստել սաների առողջական համակարգի խթանմանը, լարվածության վերացմանը՝ երաժշտության ներքո:

## **ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

### **Ունկնդրում**

- «Մեր հայրենիք» խոսք՝ Միքայել Նալբանդյանի , երաժշտ.՝ Բարսեղ Կանաչյանի
- «Մանկական նվագներ» 12 պիես ժողովրդական թեմաներով
- «Աշնան երգ» խոսք՝ Հովհաննես Թումանյանի , երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի
- «Քայլերգ» երաժշտ.՝ Ռոբերտ Շումանի
- «Հոյ նազան» ժողովրդական
- «Տարվա եղանակներ» երաժշտ.՝ Անտոնիո Վիվալդի
- «Խիզախ հեծյալը» երաժշտ.՝ Ռոբերտ Շումանի
- «Առավոտ» երաժշտ.՝ Էդվարդ Գրիգի
- «Մենուետ» երաժշտ.՝ Բոկկերինի
- «Տիկնիկի հիվանդությունը» երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու
- «Գարնան սպասում» խոսք.՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի

- «Ուրախ-տխուր» երաժշտ.՝ Լյուդվիգ Վան Բեթհովենի
- «Ծաղրածուներ» երաժշտ.՝ Կաբալևսկու

### **Երգեցողություն**

- «Տերունական աղոթք» հոգևոր երգ
- «Խնոցի» խոսք՝ Հովհաննես Թումանյանի , երաժշտ.՝ Ժողովրդական
- «Կաքավիկ» խոսք՝ Հովհաննես Թումանյանի, երաժշտ.՝ Կոմիտասի
- «Մառան մտա» ժողովրդական
- «Փայտե ձիուկ» երաժշտ.՝ Կոմիտասի
- «Ջան գառնուկ» ժողովրդական, մշակումը՝ Կոմիտասի
- «Նանիկ Նայ» ժողովրդական
- «Անձրև-անձրև» ժողովրդական
- «Ծաղիկ ջան» ժողովրդական
- «Վարդի ծառ» ժողովրդական
- «Լորիկ» ժողովրդական
- «Կովկասի քաջեր» ժողովրդական
- «Ուրախ առավոտ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Հավերժական ծաղիկ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Տիեզերք» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Մենք ուզում ենք խաղաղություն» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Կակաչ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Ճուտիկների մանկապարտեզ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Հայրենիք» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Դինգ-դոնգ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Ռոբերտ Ամիրխանյանի
- «Չանգակ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Աշունը նկարիչ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Աշնանային վալս» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Անձրևի երգը» խոսք և երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի
- «Ե՛վ արև, և՛ անձրև» խոսք՝ Կ. Ղուկասյանի, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Մայրիկ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Բարի լույս» խոսք և երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի
- «Երևան» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Մանուկներն ենք» խոսք և երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի

- «Ես նկարեցի» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Անուններ բակում և դպրոցում» խոսք՝ Չեմֆիրա Սարգսյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Տղան և կաղնին» խոսք՝ Գուրգեն Գաբրիելյանի երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Բարի լույս» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Ձմեռ պապը» խոսք և երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Իմ ծառը» խոսք և երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Գետակ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Պարուհի Եվան» խոսք՝ Չեմֆիրա Սարգսյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Իմ Հայրենիք» խոսք՝ Ավետ Տերտերյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Հայր եմ ասում» խոսք՝ երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Երևան» խոսք՝ Մկրտիչ Կորյունի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Բերքի տոն» խոսք՝ Գուրգեն Գաբրիելյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Թռի՛ր, աղավթի» խոսք՝ Ռ. Հայրապետյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Նվեր մայրիկիս» խոսք՝ Ղ. Սիրունյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Հացթուփի երգը» ժողովրդական, մշակումը՝ Յուրի Սահակյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Դավթի թոռն եմ» խոսք՝ Պատվական Խաչատրյանի.՝ երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Բարուլթյան ծառ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ.՝ Լիլիթ Համբարձումյանի
- «Մայրիկների տոնն Է» խոսք՝ Մարիետա Սահակյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Գլոբուս» խոսք՝ Աշոտ Գալստյանի, երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Հայոց երկիր» խոսք և երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Ձմեռ» խոսք և երաժշտ.՝ Ալվարո Մանդակունյանի
- «Ցտեսություն մանկապարտեզ» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի

Երգերը կարելի է բեմականացնել՝ օգտագործելով մանկական նվագարաններ:

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- «Ցատկապարան» երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
- «Զայլերգ» երաժշտ.՝ Ռոբերտ Շումանի
- «Զայլերգ» երաժշտ.՝ Սերգեյ Պրոկոֆևի



- «Էկոսեզ» երաժշտ.՝ Ի. Գուլմեյի

### **Պար**

- «Չանգեզուրի քայլերգ» երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
- «Շալախո» ժողովրդական
- «Քոչարի» ժողովրդական
- «Նազ պար» երաժշտ.՝ Սարգիս Բարխուդարյանի
- «Նուբար» երաժշտ՝ ժողովրդական
- «Հայկական շուրջպար» երաժշտ՝ ժողովրդական
- «Հոյ նազան» ժողովրդական
- «Շալախո» երաժշտ՝ ժողովրդական
- «Վեր-վերի» երաժշտ՝ ժողովրդական
- «Հենգելի» երաժշտ.՝ Ալեքսանդր Սպենդիարյանի

### **Խաղ**

- «Շլիկ - մլիկ նապաստակ» - երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի, խոսք.՝ Լաուրա Պողոսյանի
- «Խաղ դափերով»
- «Ում շրջանը շուտ կհավաքվի»
- «Գուշակիր շարժումներից»
- «Կատարի ինչպես ես»
- «Որ նվագարանն է»

### **Նվագ մանկական նվագարաններով**

- «Վարդագուլյն աղջիկների պարը» երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
- «Դիմակահանդես» երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
- «Վալս Կատակ» երաժշտ.՝ Դմիտրի Շոստակովիչի
- «Իտալական պոլկա» Սերգեյ Ռախմանինով
- «Թզուկների երթը» երաժշտ.՝ Էդվարդ Գրիգի

### **Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)**

- «Գուլներ» խոսք՝ Նելլի Սահակյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Մայրիկ» խոսք՝ Նելլի Սահակյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի

### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

Նվագարաններով կամ ծափերով վերարտադրել սովորած երգերի ռիթմական պատկերը:

**Հորինում (իմպրովիզացիա), մատների մարզանք, երաժշտական թերապիա**  
բաժինների երաժշտությունը ընտրում է երաժշտության դաստիարակը՝ հաշվի առնելով սաների նախասիրությունները:



## Վերջնարդյունքներ (Հապավում՝ Ե )

### Ունկնդրում

- ճանաչի ազգային երգերը,
- տարբերակի երգի տեսակները,
- գնահատի համաշխարհային մշակութային որոշ նմուշներ,
- դրսևորի ընդգծված հետաքրքրություն երաժշտական ստեղծագործության հանդեպ և վերլուծի այն,
- ճանաչի մի քանի մանկական կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունները,
- հաճույքով ունկնդրի հայ ազգային, դասական, համաշխարհային երաժշտությունը,
- ունկնդրելիս հասկանա, թե ինչի մասին է պատմում երաժշտությունը,
- տարբերակի երաժշտության տոնական, ուրախ, տխուր ինտոնացիաները,
- տարբերակի հակադիր երաժշտության փոփոխությունը,
- տարբերակի երաժշտական հնչյունի բարձրությունը, ռիթմը, տեմպը, ուժգնությունը, հնչերանգը, ռեգիստրը,
- արտահայտի սեփական հույզերը, զգացմունքները և տպավորությունները՝ երաժշտության տարբեր տեսակների, ազգային տոների և ավանդույթների միջոցով:  
**Ձայնավարժություն, երգեցողություն**
- ցուցաբերի մեծ հետաքրքրություն և զգացմունքայնություն երգելու ընթացքում,
- տարբերակի երգի տեսակները,
- երգի որպես մենակատար,
- կատարի ստեղծագործությունը երաժշտության դաստիարակի, հասակակիցների հետ միասին,
- երգի ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, հնչեղ ձայնով, մաքուր ինտոնացիայով, արտահայտիչ դիմախաղով, երգչային առոգանությամբ, խոսքերի հստակ արտասանությամբ,
- տարբերի ժողովրդական, դասական, ազգային, ժամանակակից ստեղծագործությունների երաժշտության բնույթը,
- իմանա, թե ինչ է երգչախումբը, ով է խմբավարը:

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- հստակ կատարի երաժշտառիթմիկ շարժումները,
- տիրապետի երաժշտական և ռիթմիկ գործունեության հմտություններին,
- կողմնորոշվի ժամանակի և տարածության մեջ,
- ընկալի տեմպի, ռիթմի, դինամիկայի, ռեգիստրի փոփոխությունը,
- շարժվի համակարգված, հստակ, ռիթմիկ, ճկուն՝ զգացմունքային արձագանքելով երաժշտությանը:

### **Պար**

- տիրապետի քայլքի տարբեր տեսակներին՝ կից, փոփոխական, արագ, կրունկների վրա, ոտնաթաթերին, մենակ, զույգերով՝ երաժշտության ներքո,
- երկու շարասյունից կազմի երկու փոքր շրջան, ապա՝ մեկ մեծ շրջան,
- տիրապետի պարային շարժումներին,
- իմանա պարի տեսակները,
- իմանա հայական ազգային որոշ պարերի անվանումներ և պարի,
- իմանա ձեռքերի դիրքերը,
- իմանա ոտքերի դիրքերը,
- կատարի ռիթմիկ թռիչքներ,
- պտույտներ աջ և ձախ,
- դաստակների պտույտներ,
- ծափեր գլխից վեր, աջ, ձախ,
- տարբեր պարային երաժշտության սկիզբն ու ավարտը՝ օգտագործելով պարին համապատասխան պարագաներ՝ ժապավեն, փուչիկ, գնդակ, օղակ, նվագարաններ և այլն,
- տարբերակի բնույթով հակադիր երաժշտությունը,
- պարային շարժումներով հաղորդի երաժշտության փոփոխվող մասերի բնույթը,
- կարողանա իր շարժումները համապատասխանեցնել երաժշտությանը և պարընկերների շարժումների հետ,
- բեմադրի պարզ պարային շարժումներով պարեր,
- իմանա, թե ինչ է պարախումբը:

**Խաղ**

- արձագանքի երաժշտական խաղերին,
- նմանակի հեքիաթի հերոսներին երաժշտության ներքո,
- խաղի ընթացքում արտահայտի իր հույզերն ու զգացմունքները բառերով և հաղորդակցման ոչ բառային ձևերով,
- խաղի ընթացքում հասկանա և ընդունի ընկերների հույզերն ու զգացմունքները,
- դրսևորի ինքնակառավարման հմտություններ:

**Նվագ մանկական նվագարաններով**

- իմանա նվագարանների տեսակները,
- իմանա հայկական ազգային նվագարանները,
- տիրապետի մանկական նվագարաններ նվագելու հմտություններին,
- ճանաչի նվագարանը հնչերանգից,
- նվագի փոքրիկ անսամբլներում և նվագախմբերում,
- կառուցի փոխվստահելի, գործընկերային հարաբերություններ մեծահասակների և հասակակիցների հետ,
- իմանա, թե ինչ է նվագախումբը:

**Ջորինում (իմպրովիզացիա)**

- հորինի երաժշտառիթմիկ պատկերներ,
- պարզ մեղեդի,
- պարային շարժումներ,
- երաժշտական խաղ:

**Մատների մարզանք**

- կատարի մատների մարզանք՝ ընդգծելով երաժշտության բնույթը, տեմպը ռիթմը:

**Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)**

- կարողանա միաժամանակ երգի պարելով,
- պարի նվագելով,
- երգի նվագելով կամ երեքը միասին:

**Երաժշտական թերապիա**

- աչքերը փակ կամ օրորվելով ունկնդրի մեղմ երաժշտություն, լսի բնության ձայները՝ թռչունների ծվլոց, առվակի քչքչոց, մեղուների բզզոց և այլն՝ կատարելով համապատասխան շարժումներ,
- ուրվագծի երկրաչափական պատկերներ,
- մատներով օդի մեջ ցույց տա ծառից թափվող տերևներ, արև՝ իր ճառագայթներով և այլն՝ երաժշտության ռիթմին համապատասխան:

**Բովանդակություն**

**Ունկնդրում** - ուրախ, տխուր ինտոնացիաներ, երաժշտական ժանրեր, հակադիր երաժշտության փոփոխություն, հնչյունի բարձրություն, ռիթմ, տեմպ, ուժգնություն, ռեգիստր, հնչերանգ, մեղեդի:

Կոմպոզիտորներ, նրանց ստեղծագործություններ:

Ազգային տոներ, ավանդույթներ, ծեսեր:

**Ձայնավարժություն, երգեցողություն** - ճիշտ կեցվածք և շնչառություն, հնչեղ ձայն, մաքուր ինտոնացիա, հնչյունների անվանումները, երգչային առոգանություն, խոսքերի հստակ արտասանություն, արտահայտիչ դիմախաղ:

Երգչախումբ, երգի տեսակներ:

**Երաժշտաշարժական վարժություններ** - երաժշտառիթմիկ գործունեության հմտություններ, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ:

**Պար** - քայլքի տեսակներ, պարային դիրքեր, պարային շարժումներ, թռիչքներ, պտույտներ, ծափեր, պարի բեմադրում:

**Խաղ** - երաժշտական դիդակտիկ խաղերգեր, հեքիաթի հերոսների նմանակում երաժշտության ներքո:

**Նվագ բնական, մանկական նվագարաններով** - բնական, մանկական նվագարաններ, դրանց անվանումները, հնչերանգները, նվագախմբի ստեղծում:

**Հորինում** (իմպրովիզացիա) - երաժշտառիթմիկ պատկերների, պարզ մեղեդու, պարային շարժումների, երաժշտական խաղի հորինում:

**Մատների մարզանք** - մատների մարզանք երաժշտության բնույթին, տեմպին, ռիթմին համապատասխան:

**Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)** - երգել պարելով, պարել նվագելով, երգել նվագելով կամ երեքը միասին:

**Երաժշտական թերապիա** - առողջական համակարգի խթանում, լարվածության վերացում:

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- Պարապմունք
- ✓ ունկնդրում,
- ✓ ձայնավարժություն, երգեցողություն,
- ✓ երաժշտաշարժական վարժություններ,
- ✓ պար,
- ✓ խաղ,
- ✓ նվագ մանկական նվագարաններով,
- ✓ հորինում (իմպրովիզացիա)
- ✓ մատների մարզանք
  - ✓ երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)
  - ✓ երաժշտական թերապիա
- Տոն և զվարճալիք.

- Չբոսանք.
- Մշակութային այցեր.
- Երաժշտությունն առօրյայում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում առօրյայում կազմակերպվող յուրաքանչյուր տոն, զվարճալիք, զբոսանք, երբ այն ուղեկցվում է երաժշտությամբ, սանի կյանքում հաճելի իրադարձություն է, և նպաստում է նրա նախագիտելիքների, հիշողության, երևակայության, ճաշակի, ստեղծագործ մտքի զարգացմանը, նրա անձի ձևավորմանը, սաների անհատականությունը պահպանելուն: Յուրաքանչյուր տոն զվարճալիք, զբոսանք ստեղծում է ուրախ տրամադրություն, հետաքրքիր ու մատչելի ձևով տեղեկություն է տալիս շրջապատի, բնության, կենդանական և բուսական աշխարհի մասին՝ նպաստելով սաների գեղագիտական, բարոյական և մտավոր դաստիարակությանը:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝  
 Շ-Ժ, գ,է    ԽՅ-բ,գ,զ,ժ    Ի-ա,բ,գ,դ    ՅՍԱ-ա,բ,գ,դ,ե,զ,է,թ    ԻԱԱ-ա,բ,գ,դ,է

## ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ավագ տարիքային խմբի սաների գեղարվեստագեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ որ նպատակ ունի՝

- ✓ զարգացնել սաների գեղագիտական պատկերացումները, գեղագիտական ընկալումը, գեղագիտական ճաշակը,
- ✓ մշակել իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք,
- ✓ զարգացնել գեղարվեստաստեղծագործական ունակությունները,
- ✓ զարգացնել կերպարվեստի ստեղծագործությունների վերաբերյալ սաների, պատկերացումներ

Գեղարվեստագեղագիտական դաստիարակության միջոցով զարգանում են սաների գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները:

«Կերպարվեստ և կառուցողական աշխատանք» ծրագրային բաղադրիչի խնդիրներն են՝

- ✓ զարգացնել գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունը,
- ✓ զարգացնել հետաքրքրությունը գեղարվեստական գործունեության հանդեպ,
- ✓ հարստացնել պատկերացումները կերպարվեստի ստեղծագործությունների վերաբերյալ,
- ✓ ձևավորել հետաքրքրասիրություն գեղանկարի, նատյուրմորտի, պատկերազարդ գրքերի, դեկորատիվ- կիրառական արվեստի նմուշների նկատմամբ,
- ✓ ձևավորել և կատարելագործել նկարչական ունակությունները և կարողությունները,
- ✓ ձևավորել և կատարելագործել ծեփակերտման ունակությունները,
- ✓ ձևավորել և կատարելագործել ապլիկացիա, կառուցողական աշխատանք կատարելու կարողությունները,
- ✓ նկարչական արտահայտչամիջոցներով փոխանցել արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարներ,
- ✓ զարգացնել սեփական հույզերը, զգացմունքները ու տպավորությունները արտահայտելու կարողությունը,
- ✓ ձևավորել հետաքրքրություն հայ և համաշխարհային ստեղծագործությունների նկատմամբ,



- ✓ ստեղծել ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար ազատ, անկաշկանդ միջավայր,
- ✓ ծանոթացնել տարբեր կյուլթերով բազմամաս կոմպոզիցիա ստանալու ձևերին ու եղանակներին,
- ✓ ձևավորել հասակակիցների հետ համագործակցելու կարողություն:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Հապավում՝ ԿԿԱ)**

**Նկարչություն**

- ✓ պատկերի առարկաներ, ընդգծի առարկայի մեծությունը և համաչափությունը, ցույց տա բարձրությունը, լայնությունը և խորությունը,
- ✓ Պատկերի բնօրինակից և պատկերացմամբ առարկաների խումբ (երեք և ավելի), պատկերի առանձին առարկաներ և այդ առարկաներին ավելացնելով այլ պատկերներ՝ ստանա թեմատիկ կոմպոզիցիա,
- ✓ պատկերի նատյուրմորտ՝ պահպանելով առարկաների հարաբերական մեծությունը, դիրքը, ճիշտ ընտրի գունային գամման,
- ✓ պատկերի աշնան տեսարան բնությունը կատարած դիտարկումների հիման վրա, օգտագործի գուռաշ, ջրաներկ, տարբեր գույների միացության եղանակով ստանա նոր գույն, օգտագործի գույների տարբեր երանգներ,
- ✓ օգտագործի սպիտակ, կամ բաց գույնի ֆոներ, բուսական, կենդանական և երկրաչափական պատկերների համադրությամբ ստանա տարբեր զարդանախշեր,
- ✓ պատկերի առարկաներ, ընդգծի առարկայի մեծությունը և համաչափությունը, ցույց տա բարձրությունը, լայնությունը և խորությունը,
- ✓ պատկերի մարդու մարմնի տարբեր շարժումներ՝ տղան ձեռքերը վեր բարձրացրած աղջիկը պարելիս և այլն,
- ✓ պատկերի , հեքիաթից որևէ սյուժե,
- ✓ նկարի երևակայությամբ,
- ✓ ներկայացնի բնության գեղեցկությունը, երևույթները տարվա տարբեր եղանակներին նկարելու միջոցով,
- ✓ նկարի մտահղացմամբ,
- ✓ օգտագործի նկարչության ոչ ավանդական տեխնիկաներ ՚թելերով, սպունգով, բամբակով և այլն,
- ✓ համագործակցի խմբային աշխատանքում ,
- ✓ դրսևորի ճանաչողական հետաքրքրություն և ակտիվություն առաջադրանքներ կատարելիս,
- ✓ ճանաչի և գնահատի հայ և արտասահմանյան նկարիչների ստեղծագործությունների որոշ լավագույն նմուշներ,
- ✓ բացահայտի և գնահատի գեղեցիկը,
- ✓ աշխատի մաքուր և կոկիկ,
- ✓ գնահատի իր ընկերների աշխատանքը, մեկնաբանի ինչն է հավանում ինչը՝ ոչ:

**Ծեփակերտում**

- ✓ դրսևորի ծեփակերտման ունակություններ,

- ✓ ստեղծի աշխատանքներ ըստ թեմայի, գաղափարի,
- ✓ ստեղծի երևակայական աշխատանքներ,
- ✓ ընտրի նյութեր ու գործիքներ,
- ✓ համադրի մասերը, ստանա ամբողջական պատկեր,
- ✓ ստեղծի պարզ նախշեր,
- ✓ ստեղծի երևակայական հարթ և ծավալային պատկերներ,
- ✓ մեկնաբանի և վերլուծի իր աշխատանքը:
- ✓ դրսևորի համապատասխան հույզեր, զգացմունքներ,
- ✓ նախագծի թեմատիկ տարբեր կոմպոզիցիաներ,
- ✓ կատարի նախշեր ծեփակերտած առարկաների վրա,
- ✓ ներկայացնի արտահայտչականություն,
- ✓ ներկայացնի կերպարին բնորոշ նշաններ ձողիկի միջոցով տալով դրան արտահայտչականություն :

### **Ապիկացիա**

- ✓ ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա տարածական պատկերացում,
- ✓ դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն,
- ✓ նկարագրի և բացատրի աշխատանքի ընթացքը, օգտագործի նյութերը խնայողաբար,
- ✓ տիրապետի թղթերի կտրման և փակցման կարողություններին,
- ✓ տիրապետի դեկորատիվ արվեստի տարրերին,
- ✓ անվանի գույները,
- ✓ ստեղծի գունագեղ և տարբեր ձևերի նախշեր,
- ✓ փորձարկի տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով, ստեղծի պատկերներ կոլաժներ,
- ✓ կիրառի տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և կիրառելի դարձնելու համար,
- ✓ ճանաչի և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները,
- ✓ ստեղծի դեկորատիվ գունային կոմպոզիցիա, զարդանախշ ուղղանկյան, զուլակի, կամ շրջանի մեջ ,
- ✓ կտրի և գունազարդի սեղանային, սովերային թատրոնների համար տարբեր սովերապատկերներ,
- ✓ ստեղծի համաչափ ձևի առարկաներ /պար բռնած մարդուկներ/ կտրատելով մի քանի շերտ ծաված թուղթը,
- ✓ ստեղծի խճանկարային պաննո գունավոր թղթից,
- ✓ ստեղծի տարբեր տեսարաններ/ ծաղկամանի մեջ ծաղիկներ, անտառային պատկեր, աշնանային ծառ,/գունավոր թղթերով կտրատված պատկերներից,
- ✓ կատարի համատեղ աշխատանք / այգու տեսարան/, օգտագործի տարբեր լրացուցիչ նյութեր / բնական նյութեր, թելեր, կտորներ և այլն/:

### **Կառուցողական աշխատանք**

- ✓ հասկանա և գնահատի գեղեցիկը,
- ✓ դրսևորի հետաքրքրություն գեղարվեստական գործունեության նկատմամբ,
- ✓ կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների հանդեպ դրսևորի համապատասխան հույզեր, զգացմունքներ,
- ✓ դրսևորի ստեղծագործական մոտեցում առաջադրանքներ կատարելիս,

- ✓ դրսևորի գեղագիտական ճաշակ,
- ✓ ունենա տարբեր կառուցողական նյութերով տարբեր շինություններ կառուցելու կարողություն,
- ✓ հասկանա իր առջև դրված խնդիրները,
- ✓ կարողանա անդրադառնա և արձագանքի սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- ✓ կիրառի ստեղծագործական տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի դարձնելու համար,
- ✓ կառուցի տարատեսակ շինություններ կիրառելով տարբեր տիպի չափի, բարձրության և նշանակության կառուցողական նյութեր,
- ✓ ստեղծի մատնային թատրոնի համար կերպարներ թղթից կամ կտորից,
- ✓ ուլունքներով հավաքի վզնոց, ծաղիկ և այլն,
- ✓ թղթի ծալման միջոցով կառուցի նավակ, ինքնաթիռ, գլխարկ, Էջանիշ , տուփ , աղաման, կարապ, դրամապանակ, բաժակ, դիմակ, բացիկ, տոնաձառի խաղալիքներ, հովհար, անձրևանոց և այլն,
- ✓ կառուցի տարբեր պատկերներ, տեսարաններ մեկ կամ մի քանի տարբեր տեսակի բնական նյութեր օգտագործելով,
- ✓ ստեղծի հեքիաթի թեմաներով սյուժետային պատկերներ հասակակիցների հետ,
- ✓ դեկորատիվ բույսերից պատրաստի ծաղկեփունջ:

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային

- 🚦 Խաղեր.
- 🚦 Պարապմունքներ.
- 🚦 Մշակութային այցեր.
- 🚦 Աշխատանք կենտրոններում.
- 🚦 Փորձարարություն.
- 🚦 Չբոսանք, Էքսկուրսիա.
- 🚦 Ինքնուրույն գործունեություն:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝

Շ - (թ), (ժգ), ԽՅ- (բ), (ե), (զ), (ժ), Ի - (ա), (բ), (զ), (դ), (ե), (զ),  
 ՅՍԱ- (ա), (բ), (զ), (դ), (ե), (զ), (Է), (ը) , ԻԱԱ (ա), (դ), ( Է) :

## ՉԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՅԱՆՁՆԵՐԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է զարգացնող առարկայական միաջավայրի առկայությամբ: Ավագ խմբի 5-6 տարեկանների կրթական հիմնական ծրագրի լիարժեք իրականացման և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է պահպանել զարգացնող միջավայրին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1. սաների ճանաչողական հետաքրքրությունների, իմացական կարողությունների զարգացման, սյուժետադերային խաղերի, ինքնուրույն գործունեության համար խմբասենյակում տարատեսակ խաղալիքների, պարագաների, դիդակտիկ նութերի առկայություն,
2. երաժշտական գործիքների, խաղային նյութերի և սարքավորումների առկայության ապահովում երեխաների երաժշտական ունակությունների զարգացման համար,
3. սաների կերպարվեստային գործունեության համար անհրաժեշտ պարագաների ապահովում,
4. զբոսանքների ընթացքում համապատասխան պարագաներ, աշխատանքային գործիքների ապահովում.
5. ֆիզիկական զարգացման, առողջության պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն,
6. թատերական գործունեության տարաբնույթ տեսակների (ստվերային, սովորաթղթային, սեղանային և այլն), թատերական բեմականացումների համար անհրաժեշտ պարագաների առկայություն,
7. խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված անհրաժեշտ պայմանների առկայություն՝ շարժողական խնդիրներ ունեցող սաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու՝ ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտուկներ,
9. մեդիագրագիտության իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն,
10. սաների ինտելեկտուալ զարգացման համար խաղերի (դոմինո, շաշկի, շախմատ և այլն) առկայություն,
11. ազգային պատմությունն ու մշակույթը նկարագրող պաստառների, պետական խորհրդանիշների անկյան (դրոշ, զինանշան, օրհներգ)առկայություն,

12. սաների փորձարարական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների (գլոբուս, քարտեզ, մակետներ, նկարների հավաքածուներ, մազնիս, սեղանային տպագիր խաղեր և այլն) առկայություն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ Օրենք, 2020թ.
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ Երևան, 2021թ.
3. Ասատրյան Լ.,- Էկոլոգիական այբբենարան, Երևան - 2006թ.
4. Ասատրյան Լ., Սարգսյան Փ. - Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը, Երևան-2002թ.
5. Աստվածատրյան Ս. և ուրիշներ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Երևան, 2001 թ
6. Ավետիսյան Ժ. Կերպարվեստ 5-6 տարեկաններ Երևան 2020թ.
7. Ավետիսյան Ժ. Ոչ ավանդական նկարչություն Երևան 2020թ.
8. Թաղիանոսյան Զ. - Դաստիարակել անվտանգ վարքագիծ, Երևան-2003թ.,
9. Հովհաննիսյան Ա. Դպրոցի շեմին, Երևան 2003թ.
10. Հովհաննիսյան Ա. Ա., Ամիրխանյան Ա. - Փոքրիկ բնասեր, Երևան- 2003թ.
11. Մարտիրոսյան Գ. - Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Երևան -2002
12. Մարության Ս. Ա, Հովակիմյան Կ. Ս. Նախադպրոցականի սեռային դաստիարակությունը մանկապարտեզում և ընտանիքում . Երևան 2007թ.
13. Մարության Ս., Դավաթյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008թ.
14. Միտոյան Հ. և ուրիշներ Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր/5-6 տարեկաններ/ Երևան 2008
15. Միտոյան Հ., Սմբատյան Լ. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2010թ.
16. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020թ
17. Միտոյան Հ. և ուրիշներ Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Երևան 2010թ.
18. Մուրադյան Ժ., Ոչ ստանդարտ տիպի խնդիրները ավագ նախադպրոցականների մտածողության զարգացման միջոց, Երևան-2001թ.
19. Չիբուխչյան Ս. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Երևան 2014թ.
20. Սմբատյան Լ. Խաղերի և խաղ- զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում, Երևան -2014թ.

21. Առաքելյան Յ.Գ., Կարմանովա Լ.Ֆ., Ամենօրյա ֆիզիկական վարժություններ մանկապարտեզի ավագ խմբում (մեթոդական հանձնարարականներ), Երևան; 1986.- 104 էջ:
22. Առաքելյան Ռ. Ֆիզկուլտուրայի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում (5-6 տարեկան). Երևան «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2008.- 48 էջ:
23. Առաքելյան Ռ. Շարժախաղեր նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար: Երևան.- 2009.- 177 էջ:
24. Գրիգորյան Յու.Գ., Ղուկյան Յ.Է. Համատեղ ֆիզիկական վարժություններ ծնողների և երեխաների համար, Ուսումնական ձեռնարկ, Երևան, հեղինակային հրատարակչություն, 2012,- 50 էջ:
25. Գրիգորյան Յու.Գ., Ղուկյան Յ.Է. Առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն, մեթոդական ձեռնարկ նախադպրոցականների ծնողների համար: Եր. հեղինակային հրատարակչություն, 2008.- 40 էջ:
26. Գրիգորյան Յու.Գ. Ընտանիքում նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդրի շուրջ // ընտանիք և դպրոց, Երևան, 2007. N 2.- էջ 29-37.
27. Հովվեյան Ս.Հ. Հայկական ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում, Ուսումնամեթոդական ձեռնարկ: Հեղ. հրատ.- Եր. 2010.: 144 էջ:
28. Մարտիրոսյան Ա. «Մանկական մերսում» -Երևան, Հեղինակային հրատ. - 2017.-120 էջ
29. Նահապետյան Ե.Ն. «Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը» Մենագրություն: Եր.: Հեղ. հրատ., 2018.-144 էջ:
30. Նահապետյան Ս.Ս. Ընդհանուր զարգացնող վարժություններ: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Լույս, 1988.- 193 էջ:
31. Նասիլյան Ռ.Լ. Շարժախաղեր և ուսուցման մեթոդիկան/ Մեթոդական ձեռնարկ Վանաձոր, 2006, 63 էջ:
32. Ղարիբյան Գ.Գ. Ընդհանուր զարգացնող վարժություններ (ուսումնական ձեռնարկ), Երևան: Հեղ. Հրատ. 2013, 335 էջ:
33. Ղարիբյան Գ.Գ. Ֆիզիկական դաստիարակությունը մանկապարտեզում. Ուս. մեթ. ձեռն., հեղ. հրատ., 2016, 116 էջ:
34. Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте– Санкт Петербург : Питер, 2009. – 400 с
35. Венгер Л. А. 'Готов ли ребенок к школе, М.: Знание, 1994. — 192 с.
36. В ы го тски й А .С ., Мышление и речь , М .,1999 г.
37. Дошкольное воспитание - научно-методический журнал Москва - 2000-2007г.

38. Дошкольное образование России- Москва-2001 г.
39. Обухова, Л. Ф. Возрастная психология : учебник для бакалавров /Л. Ф. Обухова. - Москва, 1999. — 442 с.
40. Сохин Ф.А., 'Психолого-педагогические основы развитие речи дошкольников', М., 2002 г.
41. Юдина Е., Г.Степанова,Е. Денисова Педагогическая диагностика в детском саду- Москва 2003 г.
42. В.И. Яшин а и др.,Методика развития речи и обучения родному языку дошкольников, М., 2000 г.
43. Бердыхова Я. Мама, папа, Занимайтесь со мной: Пер.с.Чех. М.: Фис, 1990.-104 с.
44. Губерт К.Д., Рис М.Г. Гимнастика и массаж в раннем возрасте. М.: “Просвещение” 1981.- 127 с.
45. Лайзане С.Я. Физическая культура для малышей. М.: Просвещение, 1987.- 160 с.
46. Лиддл Т., Йорк Л. Как развивать моторику у детей от 0 до 5 лет. М.” Флир- Пресс, 2007- 190 с.
47. Осокина Т.И. Физическая культура в детском саду. М.:“Педагогика”,1986- 360 с.
48. Степаненкова Э.Я. Теория и методика физического воспитания и развития ребенка. М.: “Академия:, 2006- 368с.
49. Теория и методика физической культуры дошкольников. Учеб. пособие: // Под. ред. С.О. Филлипповой, Г.Н. Пономарева, СПб. “Детство- пресс” М: 2008.- 650с.
50. Шебеко В.Н., Ермак Н.Н. Физическое воспитание дошкольников. Учеб. пособ. М.: “Академия”, 2000- 176с.»: